

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ Ալիեի Երազները

Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիևի գործերը սահուն չեն ընթանար այս օրերուն: Նախագահական ընտրութիւնները, որոնք նախատեսուած էին յառաջիկայ աշնան, անակնկալօրէն առաջ բերուեցան եւ այժմ տեղի պիտի ունենան Ապրիլին: Չպատճառաբանուած այս փոփոխութիւնը յառաջացուց ընդդիմադիր կուսակցութիւններու ընդվզումը, որոնք միասնաբար որոշեցին, որ պիտի պայքարեն այդ ընտրութիւնները: Այսպիսով, Ալիևի վերընտրութիւնը այժմէն իսկ կորսնցուցած է իր միջազգային օրինականութիւնը:

«Ենի Ատրպեյճան» կուսակցութեան համաժողովի ընթացքին, որ գումարուած էր զինք առաջադրելու համար նախագահական ընտրութիւններու թեկնածու: Ատրպեյճանի բռնապետը Յայութեան հասցէին հնչեցուց հերթական սպառնալիքները:

Ալիև իր ելոյթի ընթացքին խոստացաւ «ատրպեյճանցիներուն վերադարձնել» Երեւանը եւ Յայաստանի հարաւարեւելեան Սիւնիքի մարզը: «Այս մեր ռազմավարական նպատակն է եւ մենք պէտք է աստիճանաբար մօտենանք այդ նպատակին», - յայտարարեց Ալիև:

Պաշտօնական Երեւանը տուաւ հակիրճ պատասխան մը յայտարարելով որ, Յայաստանի նկատմամբ տարածքային պահանջները ցոյց կու տան Պաքոյի իշխող ռեժիմի ռասիստական ելոյթները:

Առաջին անգամ չէ որ Ալիև մնաց յայտարարութիւններ կը կատարէ: Յետեւաբար, Յայաստանի մէջ լրջութեամբ չեն վերաբերիր անոնց, ընդհակառակը, շատեր ծիծաղով կ'ընդունին այդ խօսքերը, զանոնք նկատելով նախընտրական ամբոխավարութիւն:

Այդ ճիշդ ըլլալով հանդերձ, կը վերջիչենք նաեւ այն, որ Ալիև կը փայփայէ այլ երազներ: Տարիներ առաջ ան ըսած էր թէ՛ այսպէս շարունակուելու պարագային Յայաստանի մէջ մարդ պիտի չմնայ եւ մենք քալելով կը հասնինք Երեւան:

Պատերազմի դաշտին վրայ իր կրած յաջողական պարտութիւններէն ետք, Ալիև շատ լաւ կը գիտակցի որ ռազմական միջոցներով չի կրնար հասնիլ իր նպատակին: Ան իր յոյսը կապած է այն բանի վրայ, որ օրին մէկը Յայաստանը պիտի պարպուի ու ինք «քալելով» պիտի հասնի Երեւան:

Թշնամին յուսախաբ ընելու գործը ընդհանուր էստրատեան պարտականութիւնն է: Ձարգացնելով մեր երկիրը ու ժողովուրդը պահելով հայրենիքի մէջ, Ալիևի երազները կը մնան այդպիսին՝ միայն երազ:

«ՄԱՍԻՍ»

Արցախեան Շարժման 30-Ամեակի Տօնակատարութեան Առթիւ «Հակառակորդը Պետք է Իմանայ՝ Մեզ Յետ Ուժի Լեզուով Խօսելը Դատապարտուած է Չախողման» Բալո Սահակեան

Փետրուարի 13-ին, Ստեփանակերտի վերածննդի հրապարակին վրայ նշուեցաւ Արցախեան ազգային-ազատագրական շարժման 30-ամեակը: Այս առթիւ տեղի ունեցած բազմաճակատանոց հանրահաւաքի ժամանակ իր ունեցած իր ելոյթին մէջ, Արցախի Հանրապետութեան նախագահ Բալո Սահակեան յայտարարեց որ, հակառակորդը պէտք է իմանայ՝ մեզի հետ ուժի լեզուով խօսելը դատապարտուած է ձախողման:

«1988 թուականը բեկումնային եղաւ հայ ժողովրդի պատմութեան մէջ: Երեք տասնամեակ առաջ այս օրերին համայն հայութիւնը համախմբուեց, դարձաւ մի բոլորով ողջ աշխարհին ազգարարելով սեփական բնօրրանում ազատ ու անվտանգ ապրելու համար մաքառելու իր պատրաստակամութեան մասին: Համաժողովրդական այս պոռթկումը մարտահրաւէր էր բռնատիրութեանը, հալածանքներին, մարդու իրաւունքների խախտումներին, բոլոր այն արհաւիրքներին, որոնց միջով անցել է մեր ժողովուրդը իր բազմադարեայ պատմութեան ընթացքում: Եւ այս շարժման պսակը դարձաւ հայոց անկախ պետականութեան վերականգնումը», իր խօսքի սկզբնաւորութեան ըսաւ Բալո Սահակեան:



Ստեփանակերտի վերածննդի հրապարակին վրայ Արցախի Հանրապետութեան նախագահ Բալո Սահակեան ելոյթի պահուն

Նախագահ Սահակեան յայտնեց որ, գտնուելով օտար ու արհեստածին Ատրպեյճանի կազմին մէջ Արցախը դատապարտուած էր հայաթափման եւ կործանման: Այդպիսի ճակատագիր ունեցան Նախիջևանը, Ատրպեյճանին բռնակցուած պատմական հայկական այլ տարածքներ:

«Չնայած այդ ամէնին՝ Արցախեան շարժումը ազգային-ազատագրական պայքարի այն բացառիկ օրինակներից մէկն է, որն ի

սկզբանէ որդեգրել էր պատմական արդարութեան եւ ոտնահարուած իրաւունքների վերականգնումը քաղաքակիրթ ու խաղաղ միջոցներով, միջազգային նորմերին ու կանոններին խիստ համահունչ», շեշտեց Արցախի նախագահը:

«Պաշտպանութեան բանակը եւ հայոց զինուած ուժերը մեր ազգային-ազատագրական պայքարի, մեր անկախ պետականութեան

Շար.ը էջ 4

Նախագահի Թեկնածու Արմէն Սարգսեան Այցելեց ՄԴՀԿ Կեդրոն



Արմէն Սարգսեանի հանդիպումը Երեւանի Հնչակեան կեդրոնէն ներս

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան կեդրոնական գրասենեակը այցելեց ՀՀԿ-ի կողմէ Հայաստանի նախագահի թեկնածու առաջադրուած Արմէն Սարգսեան ու հանդիպում ունեցաւ կեդրոնական վարչութեան ներկայացուցիչներուն եւ Հայաստանի կառույցի վարչութեան հետ:

Շուրջ երկու ժամ տուած հանդիպման ժամանակ Հայաստանի Հնչակեան ղեկավարներուն Արմէն

Սարգսեան ներկայացուց իր ծրագրերը, լսեց կարծիքներ եւ առաջարկներ՝ ներկայներուն կողմէ: ՄԴՀԿ կեդրոնական վարչութեան անդամ Նարեկ Գալստեան հանդիպումի մասին «Առաւօտ» թերթին յայտնած է որ, Արմէն Սարգսեանին ուղղած են իրենց յուզող բազմաթիւ հարցեր ու ստացած՝ պատասխաններ:

Շար.ը էջ 5

«Աթէշեանին Չենք Ընդունիր, Նոր Պատրիարք Կ'ուզենք Ընտրել» Կարօ Փայլան

Թուրքիոյ խորհրդարանի հայ պատգամաւոր Կարօ Փայլան ընդվզած է թրքական իշխանութիւններուն կողմէ Աթէշեան արքեպիսկոպոսին փոխպատրիարք վերանշանակելու անօրինական քայլի դէմ:

Հայ պատգամաւորը իր Twitter-ի էջին վրայ գրած է. «Պետութիւնը պատրիարքարանի հարկադիր կատարողին (նկատի ունի արք. Արամ Աթէշեանին) նշանակելու համար սովորելու արժանի ինտրիզներ կազմակերպեց: Բայց մենք հարկադիր կատարողին չենք ընդունիր: Կ'ուզենք նոր պատրիարք ընտրել»:

Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի կրօնական ժողովի որոշմամբ Արամ Արք. Աթէշեան վերադարձած էր պատրիարքական փոխանորդի պաշտօնին:

Կրօնական ժողովը քննարկելէ ետք պատրիարքական ընտրութեան վերաբերեալ Թուրքիոյ ներքին գործոց նախարարութեանէն փետրուար 5-ին ստացուած նամա-

Շար.ը էջ 5

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

«Դասական» Վերջակետ Ինտրիգին. Որոշումն Արդեն Կայացուել է

ՆԱՅԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Հանրապետական կուսակցության փոխնախագահ Արմեն Աշոտեանը Ազատութիւն ռադիոկայանին տուած հարցազրոյցում փաստացի հաստատել է, որ ՀՀ-ն Հայաստանի վարչապետի պաշտօնում կառավարող Սերժ Սարգսեանին: Նա ասել է, որ դա իր անձնական կարծիքն է, որը շատերն են կիսում, իսկ կուսակցութիւնը դեռ վերջնական որոշում չի կայացրել: Սակայն յետոյ նա անսպասելի աւելացրել է, որ այս ամէնը նման է դասական ներկայացմանը. «Բոլորը գիտեն ինչով կ'աւարտուի, սակայն միեւնոյն է նայում են»:

Հարցազրոյցից այնպիսի տպաւորութիւն էր, որ Աշոտեանը եկել էր հենց այդ բառերն ասելու: Սա վերջակետ է երկար ամիսներ տեւած ինտրիգին՝ Սերժ Սարգսեանը վարչապետ կը դառնայ, թէ կ'անցնի ստուեր՝ նշանակելով իր դրածոյին: Աշոտեանն ասում է, որ ի սկզբանէ ոչ մի ինտրիգ էլ չի եղել, բոլորին ամէն ինչ պարզ է եղել, որովհետեւ սա «Ժանրի կլասիկա» է:

Դրանից յետոյ, ելնելով «դասական սցենարից», բեմ պէտք է բարձրանայ գլխաւոր հերոսը եւ «սխառնք գործի»: Վարչապետ դառնալու որոշումը հիմնաւորելու համար Սերժ Սարգսեանին «դասական» ֆոն է պէտք՝ սպառնալիք անվտանգութեանը, շուրջբոլորը

թշնամիներ են, ոչ ոք չի կարող յաղթել, եւ միայն հերոսը կը սպանի վիշապին:

Ո՞վ է լինելու դասական ներկայացման «վիշապը»: Մի քանի թեկնածու կայ: Առաջին հերթին, Սերժ Սարգսեանը, ինչպէս խոստացել էր, կարող է «գրողի ծոցն ուղարկել» հայ-թուրքական արձանագրութիւնները եւ յայտարարել սփիւռքի հետ որոշ համատեղ քայլերի մասին:

Երկրորդ, Սերժ Սարգսեանը կարող է պատասխանել Իլհամ Ալիեւի ազդեցիկ յարձակմանը եւ քայլ անել Արցախի հետ յարաբերութիւններում, օրինակ, Հայաստանի ու Արցախի միջեւ անվտանգութեան համաձայնագիր ստորագրելով:

Հնարաւոր է նաեւ ներքաղաքական «հերոսական» քայլ կատարուի: Օրինակ, աւարտին են մօտենում բազմաթիւ դատական գործընթացներ, որոնք որակուել են որպէս դաւադրութեան եւ գինուած ընդվզման փորձեր: Խօսքը թէ Սասնա ծռերի, թէ Նորք Մարաշի գինուած խմբի, թէ Սամուէլ Բաբայանի մասին է: Մամուլում արդէն տեղեկութիւններ են հրապարակուել, որ Սերժ Սարգսեանն իր նախագահութեան աւարտին կարող է ներում չնորհել այդ գործով անցնողներին, որոնցից շատերն իրական հերոսներ են:

Այնպէս, որ Արմէն Աշոտեանը ազդարարել է «Մեր լեզունեան բալետի» նոր ակտի մասին:

«ԼՐԱԳԻՐ»

Ի՞նչ Այլընտրանք է Առաջարկում Իրանը Հայաստանին

ՀԱՅԿ ԴԱԻԹԵԱՆ

Հայաստանում Իրանի դեսպան Սեյեդ Քազեմ Սաջադին լրագրողներին հետ հանդիպման ժամանակ յայտարարեց, որ Իրանը պատրաստ է «յարմար գնով» գազ վաճառել Հայաստանին. «Եթէ Հայաստանը կարողանայ գազ գնել իր հարեւաններից, Իրանը պատրաստ է այս հարցում իր առաջարկութիւններն անել», - յայտարարել է դեսպանը եւ յաւելել, որ եթէ Հայաստանն է կարգաւորել, կ'արժեն համապատասխան քայլեր, եւ դա կը նպաստի շատ աշխատանքների ստեղծմանը: Դեսպանը չի մանրամասնել, թէ ինչ նկատի ունի՝ «յարմար գին» ասելով: Ո՞րն է այդ յարմար գինը՝ աւելի ցածր, քան Հայաստանն այսօր ստանում է Ռուսաստանից: Եթէ այո, ապա ինչու դեսպանը այս մասին աւելի պարզ ու յստակ չի ասում:

Այս կարգի յայտարարութիւններ իրանական կողմից հնչել են նաեւ նախկինում: Իրանի նախկին դեսպան Մ. Ռեյխիսին եւս յայտարարել էր, թէ Իրանը պատրաստ է Հայաստանին մատակարարել ռուսականից աւելի էժան գազ, սակայն գազի գնման շուրջ ՀՀ իշխանութիւնները երբեք չեն բանակցել Իրանի հետ: Հայկական կողմն էլ սակայն պնդում էր, թէ իրանական կողմը Հայաստանին աւելի էժան գազի առաջարկ չի արել: Հիմա, փաստօրէն, պատմութիւնը կարծես թէ կրկնուում է:

Իրանն այսօր գազ է վաճառում Հայաստանին բարտերային պայմաններով: Այսինքն՝ մենք Իրանից գազ ենք ստանում, որն օգտագործւում է էլեկտրաէներգիայի արտադրութեան մէջ, եւ Իրանին վճարում ենք էլեկտրաէներգիա: Դեսպանը նկատի է ունեցել էներգետիկ բարտերի ծաւալների մեծացումը, թէ՞ գազի ուղղակի վաճառքը, որի մենատէրը հայկական շուկայում, ինչպէս յայտնի է, Ռուսաստանն է:

Դեսպան Սաջադին արել է մէկ այլ ուշադրաւ դիտարկում նոյնպէս: Նա ասել է, որ Իրանական կողմը որեւէ շօշափելի բան չի ստացել Հայաստանի՝ ԵՏՄ անդամակցութիւնից՝ պատասխանելով դիտարկմանը, թէ Իրանը կարող է օգտուել Հայաստանի՝ ԵՏՄ անդամակցութիւնից. «Մենք ոչինչ չենք նկատել, եթէ դուք նկատէք, մեզ տեղեկացրէք այդ մասին», - ասել է Սաջադին:

Ինչպէս յայտնի է, Հայաստանը ԵՏՄ մտաւ ռուսական պարտադրանքով՝ մտնելով մի տնտեսական գոտի, որի գլխաւոր դերակատարը Կրեմլն էր: Գազի համեմատաբար մատչելի գինը ԵԱՏՄ

մտնելու գլխաւոր հիմնաւորումներն էր: Այն ժամանակ էլ Իրանը յայտարարեց, թէ կարող է աւելի էժան գազ տալ, սակայն կոնկրետ գին այսպէս էլ չասուեց: ՀՀ վարչապետ Կարէն Կարապետեանը վերջերս ԱԺ-ում, պատասխանելով պատգամաւորներից մէկի հարցին, նշել էր, թէ Հայաստանը միշտ պատրաստ է Իրանի հետ գազային գործակցութեան ընդլայնմանը, եթէ Իրանը հանդէս գա կոնկրետ նախաձեռնութեամբ: «Եթէ Հայաստանը որեւէ հարցում խոչընդոտ է կամ չի գործակցում, ապա իրանական կողմը թող նշի», - ասել էր Կարէն Կարապետեանը:

Կը նշի՞ Իրանը որեւէ կոնկրետ առաջարկութիւն, որը Հայաստանը չի ընդունել, հետեւաբար նաեւ չի իրագործել հայ-իրանական տնտեսական կապերն ամրապնդելու եւ զարգացնելու ամենաբարձր մակարդակով արուած յայտարարութիւնները: Եթէ ոչ, ապա ո՞րը կարող էր լինել դեսպանի նման յայտարարութեան իմաստը: Գուցէ իրանական կողմն ինքը հայկական կողմից ինչ-որ ակնկալիք ունի, որի մասին խոսում է ակնարկով: Ի վերջոյ գազն ու գազի գինը պարզապէս տնտեսական գործարքներ չեն, դրանք լուրջ քաղաքական լծակներ են: Բնականաբար իրատեսական չէ կարծել, թէ Հայաստանը կարող է հրաժարուել ռուսական գազից: Բայց գազային այլընտրանքը տուեալ դէպքում լիովին համարժէք է քաղաքական այլընտրանքին: Եւ ուրեմն՝ ի՞նչ այլընտրանք է առաջարկում Իրանը Հայաստանին:

«ՀԱՅԵԼԻ»

Առաջին Ջուլթակը Ոչ Թէ Նախագահն է, Այլ՝ Վարչապետը

Արմէն Սարգսեանը, ում թեկնածութիւնը Սերժ Սարգսեանը ՀՀ անունից առաջադրել է ՀՀ նախագահի պաշտօնում, դեռ չի տուել վերջնական համաձայնութիւնը՝ այս օրերին շարունակելով հանդիպումները հասարակական-քաղաքական շրջանակների հետ: Սակայն ՀՀ ակնաւորներն արդէն սկսել են նախագահի իրենց թեկնածուի հետ «պրոֆիլակտիկ» բացատրական աշխատանքներ տանել՝ հասկացնելով, որ նոր Սահմանադրութեան պայմաններում, միեւնոյն է, երկրի ղեկավարը լինելու է վարչապետի պաշտօնի յաւակնորդ Սերժ Սարգսեանը:

«Միայն է ասել՝ ինչու պետութեան գլուխը համարուող նախագահը չկայ անվտանգութեան խորհրդում: Պետութեան գլուխ չի նշանակում, որ նա առաջին ջութակն է: Բոլոր խորհրդարանական համակարգերում նախագահն ակտիւ քաղաքական առաջին ջութակն է: Նա Սահմանադրութեան երաշխաւորն է եւ ունի Սահմանադրութեամբ իր վրայ դրուած ֆունկցիաները, որը պէտք է հանդիստ իրականացնի: Այո, առաջին խաղացողը դառնում է գործադիրի ղեկավարը», - յայտարարել է ՀՀ Խօսնակը:

ՀՀ-ից նման յայտարարութիւնը կարելի է սպասելի համարել. Արմէն Սարգսեանն այս օրերին հանդիպումներ է ունենում եւ Հայաստանում, եւ սփիւռքում, հասնաբար ոգեւորուել է իր հանդէպ վերաբերմունքից: Ու ընտրուելուց յետոյ չի բացառուում, որ, այնուամենայնիւ, փորձի ամբիցիաներն

առաջ տանել՝ լիարժէքօրէն օգտուելով Սահմանադրութեամբ նախագահին տրուած լիազորութիւններից: Առաւել եւս, երբ «Շանթ» հեռուստաընկերութեանը տուած հարցազրոյցում նա չէր համաձայնել տարածուած տեսակէտի հետ, որ նոր Սահմանադրութեամբ նախագահն ընդամէնը արարողակարգային պաշտօն է եւ ունի սահմանափակ լիազորութիւններ: Այսինքն՝ Արմէն Սարգսեանն ակնարկել էր, որ ինքը միգրացիոն չհամակերպուի անգլիական թագուհու դերում:

Բնականաբար, այս ամէնը դուր չի եկել Սերժ Սարգսեանին: Ու հիմա Սերժ Սարգսեանը ՀՀ Խօսնակի միջոցով հասկացնում է, որ նոր Սահմանադրութեան պայմաններում նախագահը, որ քան էլ համարուի պետութեան գլուխը, միեւնոյն է՝ երկրի ղեկավարը, ասել է, թէ որոշողը, ինքն է լինելու: Ըստ այդմ, որքան էլ Արմէն Սարգսեանը ոգեւորուի «պետութեան գլուխը» համարուող նոր պաշտօնով, ստիպուած է լինելու համակերպուել վարչապետ Սերժ Սարգսեանի ղեկավարութեան ներքոյ անգլիական թագուհու դերի հետ: Միայն թէ, նկատենք, ՀՀ ակնաւորների այս պահուածքն այնքան էլ զեղեցիկ չէ. Արմէն Սարգսեանն առաջադրման վերաբերեալ դեռ չի տուել իր վերջնական համաձայնութիւնը, բայց հանրապետականներն արդէն սկսել են պետակուել նրա վրայ, մամուլի միջոցով ակնարկներ անել ու «տեղը ցոյց տալ»:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ»

**Ձեր Ծանուցումները
Վստահեցէք
«Մասիս»
Շաբաթերթին**

T: (626) 797-7680
massis2@earthlink.net

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏԵՕՐԵՆ
ՎԱՅԵԱՉԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ծեծկռտուք Երեւանի Աւագանիի Նիստի Ժամանակ



Հանրապետական խմբակցութիւններու անդամները յարձակում կը գործեն «Երկիր Ծիրանի»-ի անդամ Սարիմա Խաչատրեանի վրայ

Երեւանի աւագանիի նիստի ժամանակ ծեծկռտուք տեղի ունեցած է «Երկիր Ծիրանի» եւ Հանրապետական խմբակցութիւններու անդամներուն միջեւ:

«Երկիր Ծիրանի»-ի անդամները Նուպարաշէնէն բերուած կոյուղաջուրով լեցուն շիշը ներս բերած են դահլիճ ու փորձած՝ այն մօտեցնել քաղաքապետ Տարօն Մարգարեանին:

Հանրապետականի աւագանիի անդամներուն ու «Երկիր Ծիրանի» խմբակցութեան անդամներուն միջեւ հրշմջոց սկսած է: Հանրապետականները նիստերու դահլիճէն քաշելով դուրս հանած են ընդդիմադիր խմբակցութեան անդամները: Հանրապետականի աւագանիի անդամը երկու անգամ ապտակած է «Երկիր Ծիրանի»-էն

Մարինա Խաչատրեանին:

Բռնութիւն կիրառուած է նաեւ լրագրողներու նկատմամբ: Քաղաքապետարանի հասարակայնութեան հետ կապերու վարչութեան աշխատակիցներն ու քաղաքապետի օգնականները նաեւ խոչընդոտած են լրագրողներու աշխատանքը:

Յիշեցնենք, որ 12 փետրուարին Նուպարաշէնի խճուղիի յարակից շէնքի բնակիչները մի քանի վայրկեանով փակած էին «Նուպարաշէն» քրէակատարողական հիմնարկ տանող ճանապարհը: Անոնք կը բողոքէին քրէակատարողական հիմնարկի կոյուղիէն տարածուող զարշահոտութենէն: Երէկ ընդդիմադիր խմբակցութիւնը այդ տարածքէն վերցուած կոյուղաջուրը բերած էր քաղաքապետին:

«Իմ Գնահատականները Շատ Հարցերուն Տարբերուում Են ՀԱԿ-ի Գնահատականներից» Արմէն Սարգսեան

Արտախորհրդարանական ուժերու հետ իր ունեցած հանդիպումներու ծիրէն ներս, նախագահի թեկնածու Արմէն Սարգսեան հանդիպած է Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորած ՀԱԿ-ի ներկայացուցիչներուն հետ: «

Ընդդիմադիր ուժը հաղորդագրութիւն տարածած է, շեշտելով, որ Արմէն Սարգսեանի հետ հանդիպման ընթացքին խօսած են 2015-ին Սահմանադրութեան կեղծուած հանրաքուէի եւ 2017-ին կեղծուած խորհրդարանական ընտրութիւններու մասին:

«Հանդիպումը օգտակար էր», - «Ազատութեան» ըսած է Արմէն Սարգսեանը: - «Ես նախ եւ առաջ ուշադրութեամբ լսեցի իրենց բոլոր փաստարկները եւ ժողովրդավարութեան, եւ՛ տնտեսութեան,

եւ՛ պետական կառուցի մասին: Դրանից յետոյ ունեցանք բաւականին բաց քննարկումներ: Կարծում եմ, այսօր այդքանը բաւական է իմ կողմից»:

«Ազատութիւն» ռատիոկայանի մէկ հարցին պատասխանելով Ա. Սարգսեան ըսած է. «Մենք ունեցանք բաց, բաւականին զաղտնի քննարկումներ: Իմ գնահատականները տարբերուում են իրենց գնահատականներից շատ հարցերում: Կային հարցեր, որ մենք կարծես ընդհանուր կարծիք ունենք: Եւ կարծում եմ, այս յարաբերութիւնները կը շարունակուեն»:

ՀԱԿ-էն բացի Արմէն Սարգսեան արդէն հանդիպած է նաեւ ընդդիմադիր «Ժառանգութեան» առաջնորդ Ռաֆֆի Յովհաննիսեանին հետ:

ՀՀ-ի Մէջ Սերժ Սարգսեանին ՀՀ Վարչապետի Պաշտօնին Առաջադրելու Ցանկութիւն Կայ

Վարչապետները չեն նշանակուիր որեւէ մէկու խնդրանքով: Նման կարծիք ՀՀ Ազգային ժողովէն ներս աւանդական ճեպագրույցներու ժամանակ յայտնած է Հայաստանի իշխող Հանրապետական խմբակցութեան ղեկավար Վահրամ Պաղտասարեանը՝ պատասխանելով լրագրողներու հարցին՝ Հայաստանի գործող նախագահը վարչապետի պաշտօնին ՀՀ-էն կ'առաջադրուի արդեօ՞ք, թէ՛ ան կը նախըտրէ, որպէսզի իրեն խնդրեն այդ մասին:

Անոր խօսքով, ՀՀ-ի մէջ որոշակի տրամադրութիւններ կան ՀՀ վարչապետի պաշտօնին Սերժ Սարգսեանի առաջադրման հետ կապուած:

«Իհարկէ, մենք այդ հարցը չենք քննարկել: Եթէ քննարկում տեղի ունենայ, ապա իւրաքանչիւր ոք, ով ՀՀ-ի անդամ է, յատկապէս՝ գործադիր մարմինների, պարտաւոր է ենթարկուել կուսակցութեան որոշմանը», - ըսած է Պաղտասարեանը: Թեկնածութիւնը միայն իշխող կուսակցութեան անդամներու ցանկութիւնն է:

«Վարչապետի Պաշտօնը Ստանձնելով՝ Սերժ Սարգսեանը Կը Հարուածէ Պետականութեան»

ԼՂՀ նախկին Արտաքին գործոց նախարար Արման Մելիքեան կը կարծէ, որ Հայաստանի իշխանութիւններու որակի խնդրի պատճառով է, որ ռուս սահմանապահները հայ-իրանական, հայ-թրքական սահմանէն, «Ձուարթնոց» օդակայանէն դուրս բերելու գործընթաց չի մեկնարկուիր:

«Երբ տեսնում ենք, թէ ռուս սահմանապահների դուրսբերման խնդրի հետ կապուած ինչպիսի փոթորիկ է բարձրացել ռուսական ՁԼՄ-ներում, եւ ինչպէս են մեր պաշտօնեաները սուսուփուս քաշուել անկիւնները, լուռ եւ ձայն չեն հանում, սա ցուցանիշն է այն բանի, որ անվտանգութեան ոլորտի դաշնակցային յարաբերութիւններում այնպէս չէ, ինչպէս պէտք է լինի, որովհետեւ անհետեւ թուրքիւն է, երբ խնդրի նկատմամբ շատ աւելի աշխոյժ դիրքորոշում են յայտնում ռուսական ՁԼՄ-ները, քան հայ պաշտօնատար անձինք, որոնց է իրականում մեր յայտարարութիւնը ուղղուած, հասցէագրուած եղել», - շեշտած է ան:

Արման Մելիքեանը ընդգծած է, որ թիւ մէկ նպատակ պիտի ըլլայ այսօր իշխանութեան որակը փոխելը. փաստացի գործ ունինք տէ՛ր ֆաթթօ իշխանութեան հետ, որ պետականութեան ոչնչացման համար լաւագոյն նախադրեալներէն



ԼՂՀ նախկին Արտաքին գործոց նախարար Արման Մելիքեան

մէկն է, օրինական չէ, դուրսէն հովանաւորներ կը փնտռէ ինչը կ'օգտագործուի արտաքին ուժերու կողմէ:

Մելիքեան կը կարծէ, որ որքան ալ փորձէ Սերժ Սարգսեանը անվտանգութեան հայեցակարգ փոխել, միեւնոյնն է՝ այն չաւելեալ արժէք չի կրնար ունենալ, պէտք է հասարակութեան հետ երկխօսուածութեան նստիլ: Արման Մելիքեանը կը կարծէ, որ եթէ Սերժ Սարգսեանը, հակառակ իր խօսածան, ստանձնէ վարչապետի պաշտօնը, այն կը խորացնէ անվտանգութիւնը պետական հիմնարկներու, իր նկատմամբ, ինչը ընդհանուր առմամբ հարուած է նաեւ մեր պետականութեան, անվտանգութեան:

Իրանիսեան.

«Վարկանշային Ընտրակարգը Պետք է Փոխուի Սովորական Համամասնականի»

Ընտրական օրէնսդրութեան կարեւորագոյն խնդիրներէն է վարկանշային ընտրակարգը, որ, ըստ քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչ, «Իրագեկ քաղաքացիների միաւորում» հասարակական կազմակերպութեան համակարգող Դանիէլ Իրանիսեանի, թաղային հեղինակութիւններու համար դռներ կը բանայ դէպի խորհրդարան:

Ընտրութիւնները դիտարկող կազմակերպութեան ներկայացուցիչ Իրանիսեանը եւս «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ իր մտահոգութիւնները փոխանցած է՝ մասնաւորապէս նշելով. - «Մարդիկ ինչ-որ թաղային հեղինակութեան ուզում են քուէ տան՝ այս կամ այն պատճառով, այսինքն՝ բոլորին հասկանալի, յայտնի պատճառներով, եւ դրա համար մարդիկ բուհարկում են կուսակցութեանը՝ յաճախ չզիտակցելով, որ դրանով մեխանիկորէն իրենք քուէ են տալիս տուեալ կուսակցութեանը, ով որ առաջադրել է այդ թեկնածուին»:

«Իմ կարծիքով՝ սա ամենակարեւորն է, որովհետեւ մնացած մասով օրէնսդրութիւնը այդքան էլ վատը չէ՝ կատարումն է որոշ տեղերում խնդրայարոյց. ընտրակաշառքը արգելուած է՝ ամէն դէպքում է արգելուած, էստեղ մենք կատարման հետ խնդիր ունենք, թէ որքանով է, ենթադրենք, իրաւապահ համակարգը պայքարում իրապէս ընտրակաշառքի դէմ: Բայց այս դէպքում, հենց օրէնսդրական առումով, սա լրջագոյն խնդիրն է»:

«Այսինքն, ես կարող եմ հասարակութեան քաղաքական հասարակութեան անունից ասել, որ եթէ քաղաքական հասարակութեանը հարցնէք, թէ որն է այն մի բանը, որը Ընտրական օրէնսգրքում պէտք է փոխուի, միաձայն պատասխան կը ստանաք, որ դա ընտրակարգն է, որ պէտք է անցում կատարուի սովորական համամասնական ընտրակարգին», - յայտարարած է «Իրագեկ քաղաքացիների միաւորում» կազմակերպութեան համակարգողը:

Հայաստանի Պետական Պարտքը Աւելցած Է 123,5 Միլիոն Տոլարով, Հասնելով 6,9 Միլիարդի

2018 թուականը Հայաստանը կը սկսի պետական պարտքի տպաւորիչ աճով. միայն Յունուարին պետական պարտքը աւելցած է 123,5 միլիոն տոլարով՝ ամսուայ վերջի դրութեամբ կազմելով 6 միլիարդ 898 միլիոն տոլար:

Այն, որ Հայաստանի՝ 7 միլիարդ տոլարի սահմանագիծին մօտեցած պետական պարտքը այս տարուայ ընթացքին պիտի հասն այդ շեմը, օրերս «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ ըսած է ֆինանսներու նախարար Վարդան Արամեանը, նշելով, որ կը ծրագրեն այս տարի շուրջ 360 միլիոն տոլար նոր պարտք վերցնել:

Այս թիւերը աւելի տպաւորիչ են, երբ կը համեմատեն 2008 թուականի հետ: 10 տարի առաջ Հայաստանի պետական պարտքը կը կազմէր 1,9 միլիարդ տոլար կամ աւելի քան 3,5 անգամ քիչ:

Եթէ Հայաստանը մինչ այս կուտակած է, ապա յետապահ պէտք է մարէ: Պետական պարտքի մարման տեսանկիւնէն ամենածանր տարին 2020 թուականը պիտի ըլլայ. այդ տարի պէտք է մարուի այսօրուայ հաշուարկով 736 միլիոն տոլար:

ԼՈՒՐԵՐ

Միջնորդները Կոչ Կ'ընեն Բարեխիղճ Կերպով Կատարել Բոլոր Համաձայնութիւնները

Իկոր Պոպովը, Ստեֆան Վիսթրոմը և Էնթոնի Շոֆերը ԵԱՀԿ գործող նախագահի անձնակազմի ներկայացուցիչ Անճէյ Գասպարչիկի հետ միասին, Փետրուար 7-ին, Պաքուի մէջ հանդիպած են նախագահ Իլհամ Ալիևի, Փետրուար 9-ին Երեւանի մէջ նախագահ Սերժ Սարգսեանի, իսկ Փետրուար 10-ին՝ Արցախի նախագահ Բակո Սահակեանի հետ: Անոնք նաև խորհրդակցութիւններ իրականացուցած են արտաքին գործոց նախարարներուն հետ:

«Համանախագահները տէրֆաթթօ իշխանութիւններու հետ հանդիպելու նպատակով 9-11 նաև այցելած են Լեռնային Ղարաբաղ: Անոնք այցելած են Կոլասկան, Սանասար, Ակնա, Բերձոր և Քարվաճառ:

Համանախագահները ընդգծած են 2017 թուականի Հոկտեմբերին ժընեւի, ինչպէս նաև նախորդ գագաթնաժողովներու, մասնաւորապէս՝ Վիեննայի և Ս. Փեթերզպուրկի մէջ, ընթացքին կողմերու ստանձնած բոլոր պարտաւորութիւններու բարեխղճօրէն կատարման կարեւորութիւնը»,- կը

նշուի յայտարարութեան մէջ:

Միջնորդները խոր մտահոգութիւն յայտնած են սահմանազիծին վրայ վերջին գոհին համար և կոչ ըրած կողմերուն՝ լրացուցիչ քայլեր ձեռնարկելու լարուածութեան նուազեցման և հրադադարի պահպանման համար, ինչպէս համաձայնեցուած էր ժընեւի մէջ:

Միջնորդները նաև կոչ ըրած են կողմերուն ձեռնպահ մնալու բորբոքային յայտարարութիւններէն և սադրիչ գործողութիւններէն:

«Համանախագահները կրկին կը յայտարարեն Հելսինկեան ակտի հիմնական սկզբունքներու հիման վրայ՝ ներառեալ ուժի չկիրառումը, տարածքային ամբողջականութիւնը և ազգերու ինքնորոշման հաւասար իրաւունքները, հակամարտութեան խաղաղ լուծում գտնելու համար կողմերուն օգնելու իրենց պատրաստակամութեան մասին: Համանախագահները ողջունած են կողմերուն՝ անմիջապէս բանակցութիւնները շարունակելու մտադրութիւնը՝ հաշուի առնելով ներկայ ընտրական շրջանը»,- նշուած է յայտարարութեան մէջ:

«ԱՄՆ Կողմէ Թուրքիոյ F-35 Վաճառելը Հայաստանի Համար Խնդիր է» Ա. Խրամչիխի

Դժուար թէ այս տարի ԱՄՆ-ի կողմէ Թուրքիոյ F-35 կործանիչներու մատակարարման գործընթացը մեկնարկի: Այս մասին Tert.am-ի հետ զրոյցի ժամանակ յայտնած է ռուսաստանցի ռազմական փորձագէտ Ալեքսանտր Խրամչիխինը՝ մեկնաբանելով այն կարծիքները, թէ «ԱՄՆ-Թուրքիա» լարուած յարաբերութիւններու արդիւնքով այս ինքնաթիւններու մատակարարման մասին պայմանագիրը կրնայ վերանայուել:



Ամերիկեան F-35 կործանիչը- որ Թուրքիան կը փորձէ ձեռք ձգել

այս ինդերին հակազդելու, Հայաստանի համար Ռուսաստանի հետ յարաբերութիւններն են: Այլ տարբերակ Հայաստանը չունի»,- նշած է փորձագէտը:

Հարցին՝ Ռուսաստանը չէ անհանգստացած արդեօք, որ Հայաստանի սահմաններուն, ուր կը գտնուի ռուսական 102-րդ ռազմական խումբը, F-35 կը ձեռք բերուի, Ալ. Խրամչիխինը պատասխանած է. «Ամէն ինչ կարուած է «Ռուսաստան-Թուրքիա» յարաբերութիւններէն: Ռուսաստանի համար, իհարկէ, այն սպառնալիք է, գոնէ միայն անոր համար, որ Թուրքիան ՆԱԹՕ-ի անդամ է, բայց հասկնալի է, որ այս երկու պետութիւններու յարաբերութիւնները բաւական իւրօրինակ են, և դժուար է ըսել, թէ ուր կ'երթան անոնք: Այն կարուած է Սուրիոյ մէջ տիրող իրավիճակէն»:

Արցախեան Շարժման 30-Ամեակ

Շարունակուած է 1-էն ամենամեծ ձեռքբերումներէց են, մեր ժողովրդի և հայրենիքի անվտանգութեան ապահովման, նրա բնականոն զարգացման ամենայուսակի գրաւականը, տարածաշրջանում կայունութեան ու խաղաղութեան պահպանման ամենաազդեցիկ գործօններէց մէկը:

Նույն կայունութեան ու խաղաղութեան պահպանման ամենաազդեցիկ գործօններէց մէկը: «Հակառակորդը միշտ պէտք է իմանայ, որ մեզ հետ ուժի լեզուով խօսելը դատապարտուած է ձախողման: Մեր ժողովուրդը,

Երեւանի Մէջ Կայացան Հայ-Պուլկարական Բանակցութիւններ՝ Նախագահներու Գլխաւորութեամբ



Պուլկարիոյ և Հայաստանի նախագահներ՝ Ռուսէն Ռատել և Սերժ Սարգսեան միատեղ մամլոյ ասուլիսի ընթացքին

Պուլկարիոյ նախագահի պետական այցի շրջանին ներս Հայաստանի նախագահի նստավայրին մէջ նախագահներ՝ Սերժ Սարգսեանի և Ռուսէն Ռատելի առանձնազրոյցէն ետք կայացած են ընդլայնուած կազմով բանակցութիւններ, ապա տեղի ունեցած է երկու երկիրներու միջեւ շարք մը ոլորտներու մէջ երկկողմ համագործակցութեան ընդլայնմանն ու խորացմանն ուղղուած փաստաթուղթերու ստորագրման արարողութիւն:

Սարգսեանը և Ռատելը հանդիպման արդիւնքները ամփոփուեցան զանգուածային լրատուամիջոցներու ներկայացուցիչներու առջեւ յայտարարութիւններով:

«Վերահաստատեցին քարաբե-րութիւններն ամրապնդելու երկուստէք յանձնառութիւնը և պայմանաւորուեցին լրացուցիչ ջանքեր ներդնել հայ-պուլկարական երկկողմ և բազմակողմ համագործակցութեանը նոր տիրամիջա հաղորդելու ուղղութեամբ», - մասնաւորապէս ըսաւ Հայաստանի նախագահը:

Նշելով, որ անդրադարձած են նաև Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին, Սերժ Սարգսեանը փոխանցած է. - «Այդ կապակցութեամբ ես նշեցի, որ մեզ համար չափազանց կարեւոր է մեր գործընկերների աջակցութիւնը ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահների ձեռնարկով ընթացող գործընթացին, ինչը համահունչ է նաև ԵՄ ընդհանուր դիրքորոշմանը»:

Պուլկարիան կը հաւատայ, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը կրնայ կարգաւորուիլ խաղաղ ճանապարհով Մինսքի խումբի համանախագահներու միջնորդութեամբ և Եւրոմիութեան աջակցութեամբ: Այս մասին յայտարարած է Պուլկարիոյ նախագահ Ռուսէն Ռատելը շեշտած է, որ «հայկական համայնքը Պուլկարիոյ մէջ ոչ միայն պահպանած է իր բազային ինքնութիւնը, այլև բաւականին լաւ և արդիւնաւէտ կերպով ընդլուզուած է Պուլկարիոյ հանրութեան, ներկայացուած է մշակութային և գիտական կեանքին մէջ:

ԱՄՆ-ն Նախատեսած է 2019-ին Հայաստանին Յատկացնել Միայն 3,24 միլիոն Տոլար Օգնութիւն

12 Փետրուարին ԱՄՆ նախագահ Տանըլտ Թրամի հրապարակած է երկրի 2019 ֆինանսական տարուան պիւտձէի վերաբերեալ իր առաջարկները:

Պիւտձէի նախագիծի համաձայն՝ վարչակազմը կը ծրագրէ արտասահմանեան պետութիւններուն օգնութեան ցուցաբերման արմատական կրճատումներ:

Փաստաթուղթով 2019 ֆինանսական տարին Հայաստանին կ'առաջարկուի 3,24 միլիոն տոլարի տնտեսական օգնութիւն ցուցաբերել: 2018 թուականին այս օգնութիւնը կազմած էր 4 միլիոն տոլար: ԱՄՆ-ն միջազգային ռազմական կրթական ծրագրի շրջանին ներս Հայաստանին պիտի յատկացնէ 600 հազար տոլարի օգնութիւն: Թմրանիւթե-

րու միջազգային վերահսկողութեան ապահովման համար Հայաստանը պիտի ստանայ 1,5 միլիոն տոլար: Ինչ կը վերաբերի ռազմական օգնութեան, ապա Հայաստանին, ինչպէս և Ատրպէյճանին, ոչ մէկ միջոց պիտի յատկացուի:

Նշենք, որ անցեալ ֆինանսական տարին վարչակազմը Ատրպէյճանի տնտեսական օգնութիւնը դադրեցուցած էր, սակայն որոշած է 2019 թուականին 3 միլիոն տոլար յատկացնել: Ատրպէյճանին նաև 600 հազար տոլարի օգնութիւն պիտի յատկացուի ռազմական կրթական ծրագրի համար:

Ինչ կը վերաբերի հարեւան վրաստանին, ապա վարչակազմը նախատեսած է 25 միլիոն տոլարի տնտեսական օգնութիւն յատկացնել:

մեր բանակը և ողջ հայութիւնը ցանկացած պահի արժանի հակահարուած կտան մեր ազատութեանն ու անվտանգութեանը սպառնացող

իւրաքանչիւր ոտնձգութեան», իր խօսքի աւարտին յայտարարեց Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեան:

Թուրք Ազգայնական Գործիչ. «Յայերը Աֆրինի Մէջ կը Կռուին Թրքական Բանակին Դէմ»

Թուրքիոյ մէջ գործող «Հայկական անհիմն պնդումներու դէմ պայքարի միութեան» (ASIMDER) ղեկավար Կէօքսեւի Կիւլպէյը յայտարարած է, որ Սուրիոյ հայերը եւ ասորիները Աֆրինի մէջ քրտական ուժերու կազմին մէջ կը կռուին Թուրքիոյ զինուած ուժերուն դէմ:



ASIMDER ղեկավար Կեօքսեւի Կիւլպէյ

Կիւլպէյը, ներկայացնելով իր տուեալները, նշած է, որ քրտական ուժերու կազմին մէջ կը կռուի 14 քրիստոնէայ երիտասարդ, որոնցմէ 4-ը հայ է, 3-ը՝ ասորի: Կէօքսեւի տուեալները մէջբերած է թրքական «Antalyasonhaber» լրատուական կայքը:

Ան չի շեղուցած է, որ օրեր առաջ Թուրքիոյ ՁՈՒ կողմէ Աֆրինի ուժեղացումներէն ժամանակ Ռոշեր Կոնիս անունով հայ մը գոհուած էր, որ ներկայացուած էր որպէս խաղաղ բնակիչ: Հակահայ գործունէութեամբ յայտնի Կէօքսեւը պնդած է, որ հայ երիտասարդը ոչ թէ խաղաղ բնակիչ, այլ քրտական զինուած խմբերուն միացած հայերէն մէկը եղած է:

Ան կրկին Հայաստանը մեղադրած է ահաբեկչական կազմակերպութիւններուն օժանդակելուն մէջ, ինչպէս նաեւ շարունակած է պնդել, որ Արցախի մէջ կը գործէ «Քիւրտիստանի բանուորական

կուսակցութեան» (PKK) ռազմական ճամբար, ուր յատուկ պատրաստութիւն կ'անցնի 1750 զինեալ: Ըստ անոր՝ սուրիական պատերազմի ժամանակ Հայաստան Սուրիոյ մէջ բնակող հայերը եւ «եզիտի քիւրտերը» տեղափոխած է Ղարաբաղ: Կէօքսեւի խօսքերով այդ «եզիտի քիւրտերը» Իրանի եւ Իրաքի վրայով սկսած են անցնիլ Սուրիոյ Գամիշլի շրջան, ապա Մանպիճ, իսկ հիմա Աֆրինի մէջ Միացեալ Նահանգներու մատակարարած զէնքով կը կռուին թրքական բանակին դէմ:

Բազմաթիւ Հայաստանցիներ կը Շարունակեն «Հայրենակիցներ» Ծրագրով Մեկնիլ Ռուսաստան

Արդէն աւելի քան 10 տարի է՝ Երեւանի Մանուշեան-72 հասցէին վրայ գտնուող ՌԴ փախստականներու ծառայութեան գրասենեակի մօտ ամէն օր առաւուր կանուխէն մարդիկ կը հաւաքուին: Աւելի լաւ կեանք փնտրելու ակնկալիքով անոնք «Հայրենակիցներ» ծրագրի միջոցաւ կը փորձեն հեռանալ Հայաստանէն՝ չվախնալով անգամ Ռուսաստանի ամենահեռու ու ցուրտ շրջաններուն մէջ ապրելու եւ աշխատելու հեռանկարէն:

Երէկ, սովորականի պէս մարդոց մեծ խումբ հաւաքուած էր նշուած հասցէի մօտ: Ոմանք պարզապէս հետաքրքրուելու համար եկած էին, ոմանք ալ՝ արդէն վերջնական պատասխան ստանալու: Քիչերը համաձայնած են տեսախցիկի առջեւ խօսիլ իրենց խնդիրներուն մասին, բայց գրեթէ բոլորը պնդած էին՝ լաւ կեանքէն չէ, որ կը դիմեն այդ ծրագրին: «Էստեղից հաստատ աւելի լաւ կը լինի», «ինձ ստեղ չորրորդ կարգի մարդ եմ գգում»,

«ապրելու հնարաւորութիւն չկայ», կ'ըսէին ծրագրի յաւակնորդները: Ռուսաստանի փախստականներու ծառայութեան՝ 2007-էն ի վեր գործող «Հայրենակիցներ» ծրագիրը կ'օգնէ ԱՊՀ երկիրներու քաղաքացիներուն՝ ընտանիքներով Ռուսաստան տեղափոխուելու հարցով: Կը վճարուի ճանապարհածախար, կ'առաջարկուի աշխատանք, իրաւաբանական եւ առողջապահական ծառայութիւններէն օգտուելու հնարաւորութիւն, նախնական գումար, կացարան, ցանկութեան պարագային՝ նաեւ ՌԴ քաղաքացիութիւն:

Ռուսական լրատուամիջոցներէն կը տեղեկանանք, որ վերջին 10 տարիներու ընթացքին «Հայրենակիցներ» ծրագրի շրջանակէն ներս ԱՊՀ անդամ երկիրներէն գրեթէ 600 հազար մարդ մեկնած եւ բնակութիւն հաստատած է Ռուսաստան: Հայաստանէն մեկնողներուն թիւը այդ ցուցանիշի 7,2 տոկոսը կը կազմէ:

Նախագահի Թեկնածու Արմէն Սարգսեան

Շարունակուած էջ 1-էն

Այն հարցին թէ ՍԴՀԿ պատրաստ է սատարելու Արմէն Սարգսեանի թեկնածութեան, Գալստեան յայտնած է որ, իրենց սատարել-չսատարելը խորհրդանշական պիտի ըլլայ, քանի որ խորհրդարանական կուսակցութիւն չեն, բայց եթէ Արմէն Սարգսեան որոշէ առաջադրուել, իրենց կարծիքը դրական է:

Ըստ Նարեկ Գալստեանի, Սահմանադրութեամբ նախագահին տրուած լիազօրութիւններու շրջանակը, ինչպէս նաեւ Արմէն

Սարգսեանի կերպարն ու խարիզման կրնան նպաստներ բերել Հայաստանի յառաջընթացին:

Այն հարցին թէ արդեօք Արմէն Սարգսեան կրնայ հրաժարիլ Սերժ Սարգսեանի առաջարկէն եւ իր թեկնածութիւնը չառաջադրէ ՀՀ չորրորդ նախագահի պաշտօնին, Ընկ. Գալստեան ըսած է. «Ես չեմ կարող մեկնաբանել: Մենք ընդունում ենք ի գիտութիւն Արմէն Սարգսեանի ասածը. ինչպէս բոլորին, այնպէս էլ մեզ ստում է, որ հանդիպումներից յետոյ իր վերջնական որոշումը կը կայացնի եւ կը հրապարկի»

Միջադէպ Պոլսոյ Վարդանանց Եկեղեցւոյ Մէջ



Անցեալ Կիրակի, Պոլսոյ Ֆէրիզի թաղամասի Սուրբ Վարդանանց եկեղեցւոյ մէջ, պատարագի ընթացքին երբ պատրիարքի փոխանորդ վերանշանակուած Արամ Արք. Աթէշեանը քարոզի պիտի սկսէր, պոլսահայ գրող Պէսէ Գապար, Աստուածաշունչը ձեռքին, ոտքի կանգնելով սկսած է «Տէր Ողորմիա» երգել, խանգարելով օրուան քարոզը: Եկեղեցւոյ թաղականներն ու ապա ոստիկանութիւնը զինք դուրս կը հանեն: Ոստիկանական մէջ «դուն մեր հիւրն ես» կ'ըսեն եւ թէյով կը հիւրասիրեն զինք ապա քարոզի վերջաւորութեան ազատ կ'արձակեն հեզնելով

իր արարքը: Նշենք որ Պոլսոյ նահանգապետարանի կողմէ հրապարակուած նամակէն ետքը եկեղեցական նիստ մը գումարուած էր եւ Արամ Աթէշեանը վերանշանակուած պատրիարքի փոխանորդ: Իսկ տեղապահ Գարեգին Արք. Պէքճեանը կրօնական ժողովի ատենապետ Սահակ Եպս. Մաշալեանին բերանացի հաղորդած է իր հրաժարականի մասին: Կ'իմանանք թէ Գարեգին Արք. մտադրած է հեռանալ Պոլիսէն: Սակայն յայտնի չէ թէ ո՞ւր կ'ուզէ հաստատուիլ, Գերմանիա, Երուսաղէմ թէ էջմիածին...:

Երկու Հայեր Ռուսական Օդանաւի Արկածի Զոհ

Քանի մը օր առաջ Մոսկուայի օդակայանէն թռիչք առած օդանաւը ջախջախուած է թռիչքէն քանի մը վարկեան ետք: 71 ուղեւորներն ալ մահացած են: Զոհերուն մէջ կը գտնուէին երկու հայեր ռուսահայատակ երկրորդ օդաչուն՝ Սերգէյ Ղամբարեանն ու Վարսիկ Սելոյեանը:



Ռուսաստանի փոխադրութեանց նախարար Սոգոլովի հաղորդագրութեան համաձայն զոհերու մարմինները ստուգելու համար պահանջած է ծագումնաբանական DNA հեզագոտութիւն:

Արդարեւ AH-148 տիպի ինքնաթիռի սեւ տուփերէն մին գտնուած է լաւ վիճակի մէջ: Կը կարծուի թէ արկածը թէքնիքական սարքաւորումի խանգարումն է: Այս կապակցութեամբ «Սարաթով Ավիատիւններ» ընկերութեան բոլոր սաւառնակները արտակարգ քննութեանց եւ ստուգումներու սկսած են ենթարկուիլ:

Աթէշեանի Զենք Ընդունիլ

Շարունակուած էջ 1-էն

կը, որոշած է առաջնորդուիլ իշխանութիւններու յայտնած դիրքորոշմամբ եւ վերադառնալ 2016-ի Հոկտեմբեր 26-էն առաջ եղած վիճակին, երբ Մեսրոպ Պատրիարք Մուսթաֆեանը հանգստեան կոչուած էր: Այսպիսով, Արամ Արք. Աթէշեան պիտի շարունակէ մնալ պատրիարքական փոխանորդի պաշտօնին վրայ:

Կրօնական ժողովի կարծիքով, նոր պատրիարքի ընտրութիւնը տեղի կրնայ ունենալ համապատասխան պայմաններ ապահովելու պարագային:

Պատրիարքական տեղապահի պաշտօնին ընտրուած Գարեգին Արք. Պէքճեան չէ մասնակցած Կրօնական ժողովի նիստին: Յիշեցնենք, որ ամիսներ տե-

ւած լուծենէ ետք իսթանպուլի նահանգապետարանը Փետրուար 5-ին ի վերջոյ պատասխանած էր Պոլսոյ Հայոց նոր պատրիարքի ընտրութեան վերաբերեալ Օգոստոս ամսուն ուղարկուած դիմումին: Թրքական իշխանութիւնները յայտնած էին, որ պատրիարք Մեսրոպ Մուսթաֆեանը տակաւին ողջ է ու անոր առողջական վիճակը պատրիարքական աթոռը թափուր համարելու պատճառ չեն կրնար նկատուիլ, հետեւաբար նոր պատրիարքի ընտրութեան համար անհրաժեշտ պայմաններ չկան եւ Արամ Արք. Աթէշեան կը շարունակէ մնալ պատրիարքական փոխանորդի պաշտօնին վրայ, իսկ տեղապահ Գարեգին Պէքճեանի ընտրութիւնը, ինչպէս նաեւ անոր կայացուցած որոշումները անվաւեր կը նկատուին:

Հարցազրույց ՍԴՀԿ Հայաստանի Վարչութեան Նորընտիր Ատենապետ Սեդրակ Աճեմեանի Հետ «Բոլոր Հարցերի Պատասխանը կը Տանք Մայիսի 1-ին, Ժամը 19:00-ին, Ազնաւուրի Հրապարակում»

- Պարոն Աճեմեան, շատերի համար անակնկալ էր Ձեր՝ ՍԴՀԿ Հայաստանի վարչութեան ատենապետ ընտրուելու փաստը: Դուք բնակուում էք Միացեալ Նահանգներում, դժուար չի՞ լինելու դեկավարել հայաստանեան քաղաքական կուսակցութիւնը:

- Նախ, որքան էլ ես բնակուել եմ Միացեալ Նահանգներում, օրէնքով սահմանուած կարգով ունեմ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն, ինչով եւ հպարտ եմ: Սա՝ իրաւական մասով: Քաղաքական առումով՝ ես երկար տարիներ զբաղեցրել եմ կուսակցական տարբեր պաշտօններ, սակայն բոլորն էլ գիտեն, որ ամէն անգամ առիթն օգտագործել եմ Հայաստանի մեր ընկերների կողքին կանգնելու համար: Ես հաւատացած եմ, որ մեր բոլորիս աչքերն ու հայեացքները պէտք է յառուած լինեն Հայաստանին, մենք բոլորս ամէն ինչ պէտք է անենք մեր Հայրենիքում մէկ քար աւելի դնելու համար՝ անկախ ցանկացած օբիեկտիւ կամ սուբիեկտիւ դժուարութիւններից: Հնչակեան կուսակցութիւնն այդ առումով բացառութիւն չէ: Այո՛, մենք միասին ամէն ինչ պէտք է անենք, որ մեր արդէն 131-ամեայ քաղաքական ուժն իր գաղափարներն ու ծրագրերը Հայաստանում կենսաբի կոչելու հնարաւորութիւն ունենայ: Իբրեւ ատենապետ՝ կը կարողանամ այդ հարցում օգտակար լինել. յամենայնդէպս, ամէն ինչ կ'անեմ իմ ընկերների հետ միասին: Մի մոռացէ՛ք, որ Հնչակեան կուսակցութիւնը ոչ թէ վերելից ներքեւ, այլ ուղիղ հակառակ տրամաբանութեամբ կառավարող քաղաքական կազմակերպութիւն է: Այսօր մեր առջեւ կան բազում



մարտահրաւէրներ, որին կուսակցութիւնը պարտաւոր է տալ համաչափ գնահատականներ:

- ՍԴՀԿ Հայաստանի կազմակերպութեան 11-րդ համագումարը թողեց բազում անպատասխան հարցեր՝ կապուած առաջիկայ քաղաքական վերածելակերպումների հետ: Առաջիկայում ընտրուելու է Հայաստանի Հանրապետութեան 4-րդ նախագահ, յետոյ՝ շուրջ մէկ ամիս անց, վարչապետ: Արդէն գրեթէ պարզ է, որ նախագահ է դառնալու Սեօ Բրիտանիայում Հայաստանի Հանրապետութեան դեսպան Արմէն Սարգսեանը: Հնչակեան կուսակցութիւնում ի՞նչ կարծիք ունեն այս թեկնածուի մասին:

- Այստեղ ես պարտաւոր եմ, յանուն անկեղծութեան, երկու փաստ նշել: Առաջինը՝ ցաւօք, մեր կուսակցութիւնը խորհրդարանական չէ, ուստի զուտ քուէարկութեան առումով զրկուած է որոշումների վրայ ազդելու ցանկացած հնարաւորութիւնից: Երկրորդ՝ պարոն

Սարգսեանն ինքն է բազմիցս յայտարարել, որ դեռ չի որոշել իր վերջնական անելիքը: Նա անցկացնում է քաղաքական հանդիպումներ, եւ ՍԴՀԿ-ն նոյնպէս, բնականաբար, պատրաստուած է հանդիպել ՀՀ նախագահի թեկնածուի հետ: Ինչ վերաբերում է պարոն Սարգսեանի անձին, ապա պարզից էլ պարզ է, որ նա բաւական բարձր միջազգային հեղինակութիւն, դիւանագիտական հսկայական փորձառութիւն ունեցող անձնաւորութիւն է: Եւ կրկին բնական է, որ մենք պարտաւոր ենք ընդունել պարոն Սարգսեանի այն դրական վարկանիշը, որ կայ ե՛ւ արտասահմանում, ե՛ւ Հայաստանում: Մնացեալ առումներով, երբ մենք ծանօթանանք պարոն Սարգսեանի ծրագրերի հետ, ինչպէս նաեւ կիսուենք մեր բազմաթիւ մտահոգութիւններով, այդ ժամանակ մեր կարծիքը յստակ կը տանք:

- Քաղաքական կուլիսներում խօսուում է, որ Սեթ Սարգսեանը դառնալու է ՀՀ յաջորդ վարչապետը: Այդ հնարաւորութիւնը նրան ընծեռում են սահմանադրական այն փոփոխութիւնները, որոնց, ի դէպ, ժամանակին Հնչակեան կուսակցութիւնը կողմ է արտայայտուել: Ինչպէ՞ս է վերաբերում Սեթ Սարգսեանի՝ վարչապետի հնարաւոր թեկնածութեանը:

- Այո՛, մենք կողմ ենք արտայայտուել սահմանադրական բարեփոխումներին, կամ, այսպէս արտայայտուեմ, մենք մշտապէս եղել ենք խորհրդարանական կառավարման կողմնակից: Իհարկէ, եղան բացեր, որոնք մեր սրտով էլ չէին, օրինակ՝ ռեյտինգային ընտրակարգը, որը, մեծ հաշուով, մեծամասնական ընտրակարգի խեղաթիւր-

ուած տարբերակն է: Սոցիալ-դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը չոր կուսակցական ցանկերի կողմնակից է, որպէսզի ՀՀ քաղաքացին հնարաւորութիւն ունենայ քուէարկելու քաղաքական ուժի ծրագրերին, այլ ոչ թէ անհատներին: Սա՝ իմիջիայլոց: Ինչ վերաբերում է Սեթ Սարգսեանի՝ վարչապետ դառնալու հնարաւորութեանը, ապա նախ՝ Հնչակեան կուսակցութիւնը չէ, որ պէտք է տա այս հարցի պատասխանը: Վարչապետ առաջադրելու սահմանադրական իրաւունքը պատկանում է խորհրդարանական մեծամասնութեանը: Երբ վարչապետի թեկնածուները պաշտօնապէս առաջադրուեն, այն ժամանակ էլ մենք կը տանք մեր պաշտօնական տեսակէտը:

- Հնչակեան կուսակցութիւնը մշտապէս խօսում է սոցիալական արդարութեան մասին, սակայն դեռեւս գործնական քայլեր կամ ճանապարհային քարտեզ հանրութիւնը չի տեսել: Կա՞յ որեւիցէ յստակ քայլ, որ դուք նախատեսում էք անել:

- Քաղաքական աշխատանքը միշտ չէ, որ պէտք է երեւացող լինի, սակայն ես էլ համաձայն եմ, որ անհրաժեշտ է խօսել կոնկրետ գործողութիւններից: Երկրում առկայ բազմաթիւ մարտահրաւէրների, մեր մտահոգութիւնների եւ դրանց լուծումների հնչակեան տարբերակները քննարկելու համար ՍԴՀԿ Հայաստանի վարչութիւնը հրաւիրելու է հանրապետաք՝ Մայիսի 1-ին, ժամը 19:00-ին, Շառլ Ազնաւուրի հրապարակում: Այնտեղ էլ կը խօսենք մնացեալի մասին: **Զրոյցը՝ ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ «ԱՌԱՒՕՏ»**

Թաթուլ Մանասերեան. «Տնտեսական Աճը Զի Վերածում Մարդկային Զարգացման»

Ինչպիսի՞ն էր տնտեսական առումով 2017 թուականը մեզ համար: Թեմայի վերաբերեալ Scan News-ը գրուցել է տնտեսագէտ Թաթուլ Մանասերեանի հետ:

- Պարոն Մանասերեան ինչպիսի՞ն էր 2017 թուականը Հայաստանի տնտեսութեան համար:

- 2017 թուականին ունեցել ենք տնտեսական ձեռքբերումներ՝ պայմանաւորուած արտաքին շուկաներում պղնձի գնի բարենպաստ մակարդակով, որը նպաստել է նաեւ հանքարդիւնաբերութեան զարգացմանը եւ արտադրանքի արտահանմանն Հայաստանից: Պէտք է նկատել, որ Եւրասիական տնտեսական միութեան անդամակցութեան համատեքստում դէպի ՌԴ՝ արտահանումն աւելացել է, մասնաւորապէս գիւղմթերքների եւ գինու: Սակայն քիչ չեն եղել նաեւ դժուարութիւնները՝ պայմանաւորուած գիւղատնտեսութեան ոլորտի անկմամբ:

Շինարարութեան ոլորտն է դժուար ապաքինուող ոլորտ, որտեղ ընդհանուր ապաքինում նկատուում է, սակայն առանձին ամիսներին անկումային տենդենցներ են եղել: Էական նշանակութիւն ունի բնակչութեան կենսամակարդակի վատթարացումը. եկամուտները չեն աճել, յատկապէս սոցիալական բեւեռացումն աճել է, աղքատութեան մակարդակը ոչ միայն չի նուազել, այլեւ, բացի նրանից, որ մենք ունենք պաշտօնապէս յայտարարուած 29.4 տոկոս աղքատներ,

նաեւ ունենք աշխատող աղքատների մի ստուար զանգուած, որը ստանում է նուազագոյն աշխատավարձ, սակայն դա բաւարար չէ կենսապահովման նուազագոյն զամբիւղի մէջ մտնող ապրանքները գնելու համար: Այս առումով հակասական տենդենցների եւ զարգացումների, չիրագործուած հնարաւորութիւնների տարի էր 2017 թուականն Հայաստանի համար:

- Ինչու՞ տնտեսական աճ աս-

ուածը հայաստանաբնակներն իրենց վրայ չեն զգում:

- Տնտեսական աճն հիմնականում հանքարդիւնաբերութեան ոլորտով է պայմանաւորուած: Տարիներ շարունակ տնտեսական աճը չի վերածուած մարդկային զարգացման: Կառավարութիւնը լուրջ խնդիրներ ունի, որպէսզի ապահովի այդ անցումը եւ ՀՀ քաղաքացիները կարողանան զգալ տնտեսական աճի ազդեցութիւնը:

Դա առաջին հերթին գնողունակութեան եւ վճարունակութեան մակարդակն է աղքատութեան մակարդակով պայմանաւորուած, աշխատատեղերի աւելացումը մեզ համար մնում է օրակարգային խնդիր: Թէեւ առանձին գիւղերում սահմանափակ քանակութեամբ աշխատատեղեր են ստեղծուում, դրան զուգահեռ նաեւ կրճատուում են աշխա-

Շար.ը էջ 18

HMM Ladies
2018 GET-TOGETHER KARAOKE NIGHT
Հ.Մ.Ս. Տիկեաց Միութեան
2018 ԾԱՆՕԹԱՅՄԱՆ ԵՐԵԿՈՅ

Saturday, February 17, 2018 starting @8:00 pm
 Շաբաթ՝ Փետրուար 17, 2018, երեկոյան ժամը 8:00-էն սկսյալ

Karaoke, Chinese food & Desert
 Քարաօքէ երաժշտութիւն, ընտիր ու համադամ յինական ճաշեր

Address: Garo Soghanalian Hall
 1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

Փաստսինա՝ Կարօ Սոգանալեան Սրահէն ներս
 Entrance Donation \$30
 Մուտքի նուէր՝ \$30

Հրապարակուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբատառ Կոնդակը՝ Հայաստանի Առաջին Հանրապետութեան Եւ Մայիսեան Հերոսամարտերու 100-Ամեակին Առթիւ



ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ»
 ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՍՕՔՆ ԱԶԳԻՍ
 ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊՏԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
 ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՍԵԾՈՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱ-
 ՐԱՏԵԱՆ
 ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ ԷԶՄԻԱԾՆԻ
 ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՄԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
 ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆՑ
 ՀԱՅՈՑ
 ՍՐԲՈՅ ԵՐՈՒՄԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ,
 ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ
 ՍԱՐԿԱԲԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱ-
 ՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԵԻՑ ԵՒ ՄԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՄԱՍՑ-
 ԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Գոհութիւն եւ փառք ենք մատուցում Աստուծոյ, որ Հայաստանում եւ Արցախում վերականգնուած պետականութեամբ եւ ի սփիւռս աշխարհի ազգային կեանքի ձեռքբերումներով է մեր ժողովուրդը դիմաւորում 100-ամեակը Հայաստանի Առաջին Հանրապետութեան եւ մայիսեան հերոսամարտերի: Նշանակալի այս իրադարձութիւնների մէկդարեայ յոբելեանի առիթով Հայրապետական Մեր խօսքն ենք ուղղում սիրեցեալ մեր ժողովրդին՝ բարձրաձայնելով առաքելաւանդ պատգամը. «Եւ այս է յաղթութիւնը, որ յաղթում է աշխարհին» մեր հաւատքը»:

Մէկ դար առաջ մեր ժողովուրդը յայտնուել էր կեանքի եւ մահուան սահմանագծին: Օսմանեան թուրքիան՝ օգտուելով Առաջին համաշխարհային պատերազմի խառնաշփոթ իրավիճակից, իրագործում էր ցեղասպանութեան իր հայաջինջ ծրագիրը: Արեւմտեան Հայաստանը եւ հայկական բնակավայրերը թուրքիայում աներակուել ու հայաթափուել էին, թուրքական զօրքերը ներխուժել էին նաեւ Արեւելեան Հայաստան՝ սպառնալով մեր ժողովրդի գոյութեանը:

Այդ օրհասական պահին յոյսն առ Աստուած՝ միահամուռ կամքով մեր ժողովուրդը Սարդարապատում, Ապարանում եւ Ղարաքիլիսայում ճակատ կազմեց թշնամու դէմ: Համախմբուելու խրախոյս ու քաջալերութիւն դարձաւ Գեորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոչը՝ ժողովրդի սրտում առաջ բերելով յաղթանակելու ոգի եւ փակելով խուճապի ու նահանջի ուղին: Ետեւում մեր հայրենիքի փոքրիկ մի մասունքն էր, ետեւում Քրիստոսահաստատ Սուրբ Էջմիածինն էր՝ մեր հաւատքի օրրանն ու ինքնութեան պատուարը: Հայոց Հայրապետը մերժեց հեռանալ Սուրբ Էջմիածնից եւ քաջաշունչ պատգամով մարտի կոչեց ժողովրդին՝ ասելով. «Ես միշտ էլ հաւատացել եմ իմ ժողովրդի ոգուն: Ես գիտեմ նրա անցած ճանապարհի դառնութիւնները: Ես համոզուած եմ նաեւ, որ ազգն իմ հայոց անարգ թշնամուն դեռ չի ասել իր վերջին խօսքը: Եւ խօսքն այդ պիտի լինի յաղթական»:

Մէկ ամբողջութիւն, մէկ կամք ու հոգի դարձած մեր ժողովուրդը ոտքի կանգնեց փրկելու հայրենիքը, իր կեանքը, իր սրբութիւնները, պաշտպանե-

լու հայրենի հողում ազատ ապրելու իր իրաւունքը: Սրբոց Վարդանանց եւ Ղեւոնդեանց օրինակով Աւարայրի ոգին բոցավառուեց մայիսեան մարտերում: Յաղթանակը ձեռք բերուեց արիութեան ու հերոսութեան շնորհիւ հայկական փոքրաթիւ զօրամիաւորումների ու զօրահրամանատարների եւ նրանց շարքերը լրացրած հոգեւորականների ու աշխարհագորայինների: Թուրքական զօրքերի առաջխաղացումը կանգնեցուեց եւ ետ մղուեց: Աւերումից ու կոտորածից փրկուեց Արեւելեան Հայաստանը, եւ հինգ եւ կէս դարերի երկարատեւ դադարից յետոյ վերականգնուեց հայկական պետականութիւնը: Եղեռնահար մեր ժողովուրդը վկայեց վեր յառնելու իր զօրութիւնը, իր հոգու կենսունակութիւնը եւ ուժը հաւատքի՝ նեղութիւնների, ցաւ ու տառապանքի մէջ յաղթանակ կերտելով: Առ Աստուած հաւատքի, հայրենասիրութեան ու նուիրումի հերոսական ոգին միաւորեց ու պաշտպանեց մեր ժողովրդին, որ գերազոյն ճիգով հայոց պետականութեան հովանուները իր հայրենիքում ու սփիւռքում բարձրացրեց իր կեանքը եւ քայլեց վերելքի ուղիով:

Այսօր, սիրելի ժողովուրդ հայոց, 100-ամեայ յոբելեանը հրաւեր է մեզ նուիրուած մնալու ազգային զարթօնքի մեր իղծերին, հրաւեր՝ մեր հայրենի պետականութիւնը ամուր պահելու եւ հայրենիքով համախմբուած մնալու: Նշանակալի այս յոբելեանը նաեւ մի նոր հանգրուան է հաւատաւոր ոգով ու նուիրեալ գործերով շէնացնելու, զօրացնելու մեր երկիրն ու ազգային կեանքը, շարունակելու հետեւողական ջանքերը յանուն Արցախի հիմնախնդրի կարգաւորման, մեր բանակի հզօրացման, որպէսզի խաղաղութիւնը անվրդով լինի մեր հայրենեաց սահմաններում: 100-ամեայ յոբելեանը պատգամն է բերում համազգային միասնութեան, հայրենիք-սփիւռք կապերի արդիւնաւորման, մեր Եկեղեցու անդաստանում եւս միասնականութեան վերահաստատման:

Սիրեցեալ հաւատաւոր ժողովուրդ Մեր, իւրաքանչիւրս մեր ծառայութեան մէջ, մեր կեանքի ընթացքներում միշտ առաջնորդուելով քրիստոնէական մեր հաւատքին, ազգին ու հայրենիքին զինուորագրութեան գիտակցութեամբ՝ պիտի կարողանանք զերծ մնալ կորուստներից եւ քայլենք յաղթանակից յաղթանակ: Պետականութիւնը ազգի կազմակերպման հիմքն է, առաջընթացի ուղի, իր արժէքներով ապրելու, իր հոգեւոր ներուժը դրսեւորելու յենարան, իր ձգտումները իրագործելու եւ իրաւունքները պաշտպանելու պատուար ու ազգի յարատեւութեան գրաւակ: Զմոռանա՞նք մեր կրած զոհողութիւններն ու տառապանքները եւ միմեանց աջակից՝ կառուցենք բարօրութեամբ եւ խնդութեամբ լեցուն վաղուայ մեր օրը: Յիշենք մեր Եկեղեցուն ու հայրենիքին իրենց կեանքը նուիրած մեր հայրերին եւ հաւատքի ու հայրենեաց սիրոյ մէջ ինքներս մեզ գերազանցենք, որպէսզի այսօր նոյնպէս մեր ազգային եւ հայրենական կեանքի առջեւ ծառայած դժուարութիւններին ու խնդիրներին տրուող մեր վճիռները եւ մեր երկրի խաղաղութեանը սպառնացող վտանգներին տրուող մեր պատասխանները լինեն յաղթական: Անվարան մեր հաւատքն ու հայրենեաց սէրը թող մեզ առաջնորդեն իրականութիւն դարձնելու Արարատի փեշերին միասնական մեր հայրենիքի եւ մեր Սուրբ Եկեղեցու ու ազգային զարթօնքի տեսիլքները: «Եւ այս է յաղթութիւնը, որ յաղթում է... մեր հաւատքը»:

Մայր Աթոռ կը հաղորդէր Բաբգէն Եպիսկոպոսին թէ անտեղեակ էին Շահէ Ծ. Վարդապետի տեղապահի պաշտօնին, եւ կը հրահանգէր Եպիսկոպոսին փութացնել նոր առաջնորդի ընտրութիւնը եւ դադրեցնել ամէն յարաբերութիւն հրաժարեալ առաջնորդ եւ խնդրալարոյց Արսէն Ծ. Վրդ. Վեհուհիի հետ: Առ այս առանձին պաշտօնագիր մըն ալ ղրկուած էր Վեհուհիին: Հայրապետական պաշտօնագիրները շատ ուշ կը հասնէին, 1918 Ապրիլ 9-ին եւ Բաբգէն Եպիսկոպոսի ձեռքով կը փոխանցուէին տեղապահ Շահէ Ծ. Վարդապետ Գասպարեանին: Մայր Աթոռի պաշտօնագիրը կը հրահանգէր «Առաջնորդի ընտրութեան ցանկին մէջ չմուծել Կիլիկեան վանականներին», ակնարկելով Մուշեղ Սերոբեան Եպիսկոպոսին ներկայութեան թեմէն ներս որ որպէս Կիլիկեան Աթոռի Եպիսկոպոս կանուխէն Ամերիկա գացած էր Առաջնորդ ընտրուելու նպատակով:

Թեմական Պատգամաւորական Ժողովը

Համաձայն Հայրապետական ցուցմունքներուն 1918 Ապրիլ 7-8 օրերուն Ամերիկահայ Թեմի Պատգամաւորական Ժողովը կը գումարուէր Մեսեչուսեց նահանգի Ուստր քաղաքին մէջ՝ նախագահութեամբ Տեղապահ Շահէ Ծ. Վարդապետ Գասպարեանի որուն ներկայ եղած են 34 երեսփոխաններ Բաբգէն Եպս. Կիլիկեանի գլխաւորութեամբ: Ներքին խոսովութիւններ սակայն, հրաժարեալ առաջնորդ Արսէն Ծ. Վրդ. Վեհուհիի անհարկի միջամտութիւններով, պատճառ կը դառնան անյապաղ էջմիածնէն Լիազօր Նուիրակ մը Ամերիկա ուղարկել

յանձին խորէն Եպիսկոպոս Մուրատ-բեկեանի, որ 1920 Մայիսին Ուստր կը հասնէր երբ արդէն Վեհուհի հեռացած էր Ամերիկայէն: Յաջորդ Թեմական Պատգամաւորական Ժողովը կը գումարուէր 1920 Յուլիսին Ուստրի առաջնորդանիստ համայնքին մէջ՝ նախագահութեամբ Մայր Աթոռոյ Լիազօր Նուիրակ խորէն Եպիսկոպոսի եւ մասնակցութեամբ Շահէ Ծ. Վարդապետի ու Բաբգէն Եպիսկոպոսի: Ժողովը Թեմի Առաջնորդ կ'ընտրէր Մայր Աթոռի միաբան Տիրայր Եպիսկոպոս Տ. Յովհաննէսեանը: Նուիրակ խորէն Եպիսկոպոս էջմիածին կը վերադառնար Օգոստոս 10-ին:

Եկեղեցապատկան Կալուածներու Խնդիր Շահէ ծայրագոյն վարդապետի տեղապահութեան շրջանին Ամենայն Հայոց Գէորգ Ե. Կաթողիկոս

սէն Կոնդակ մը կը հասնէր եկեղեցապատկան կալուածներու գրաման հրատապ հարցի մասին Կովկասի կառավարութեան կողմէ: Քաղաքական կացութիւնը շատ ճնշիչ էր այդ շրջանին երբ Ջարական Ռուսիա տապալած էր եւ խորհրդային կարգեր բռնի կը տարածէին իրենց տիրոջ թները գրաւելով ազգապատկան կալուածները, ինչպէս Ջարը նախկինում փորձեր էր նոյնը պարտադրել Մկրտիչ Ա խորհմեան Հայրիկ Կաթողիկոսի օրով որուն Հայրապետ զիմադրեց առանց տեղի տալու անիրաւ բռնութեան: Կոնդակը շատ ուշ հասած է «ինն ամիսներ վերջ՝ թղթատարական արգելքներու պատճառաւ», որուն համար Հայրապետը իր խոր մտահոգութիւնը կը յայտնէր արտասահմանի բոլոր թեմերուն, հայ ժողովուրդին պատկանող դարա-


«ԶԱՐԳԱՑՈՒՄ ՄԵՐ ՈՒԺԵՐՈՎ».

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՏՆՕՐԵՆՆԵՐՈՒՄ ՈՒՂՈՒԱԾ ԱՇԽԱՏԱՆՈՑ

Զարգացում մեր ուժերով
Change From Within

Կրթական ղեկավարում եւ հայերէնի իւրացում
Ափիւռքի դպրոցներուն մէջ

Educational Leadership and Language Acquisition
In Armenian Diaspora Schools



Յունուար 11-13 ին, Հիւսիսա-չին եւ Հարաւային Ամերիկայի հայկական ամէնօրեայ վարժարաններու 29 տնօրէններ առաջին անգամ ըլլալով մէկտեղուած էին «Զարգացում մեր ուժերով. կրթական ղեկավարութիւն եւ լեզուի իւրացում սփիւռքահայ դպրոցներուն մէջ» եռօրեայ աշխատանոցին մասնակցելու համար: Աշխատանոցը, որ տեղի ունեցաւ Լոս Անճելըսի Գալիֆօրնիոյ համալսարանին (UCLA) պատերէններս, «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան (Լիզպոն, Փորթուկալ) Հայկական Համայնքներու բաժանմունքին հովանաւորութիւնը կը վայելէր, նոյն համալսարանի Ազգային ժառանգական Հնարամիջոցներու կեդրոնին եւ Մերձաւոր Արեւելեան Լեզուներու եւ Մշակոյթներու բաժանմունքին սերտ համագործակցութեամբ:

Աշխատանոցին նպատակն էր հաւաքաբար քննարկել, թէ իւրաքանչիւր տնօրէն ինչպէ՛ս կրնայ հայերէնի վերակենդանացման ուղղուած նոր մանկավարժական մեթոտները առանձնացնել ու կիրարկել: Լեզուի իւրացումը եւ ուսուցումը քանի մը մարտահրաւէրներու դէմ յանդիման կը գտնուին: Օրինակ՝ տնօրէն մը դիտել տուաւ, թէ «երեխաներէն ակնկալել, որ հայերէն խօսին առանց "հայերէն խօսէ" բառերը արտասանելու, գրեթէ մտային խաղ մըն է, ընդունուած կանոններուն դէմ պայքար մը: Ինչպէ՞ս կրնաս երեխայ մը դրդել, որ լեզու մը խօսի բնականօրէն»: Ահա այդ երեք օրերու ընթացքին յարուցուած ու քննարկուած բազմաթիւ հարցերէն մէկը:

Աշխատանոցը բաժնուած էր վեց նիստերու՝ տեսական ու գործնական բաժիններու համագործով եւ հետեւեալ նիւթերու քննարկումով՝

- Ինչպէ՛ս մշակել դպրոցական համայնք մը եւ ինչ կը նշանակէ դպրոցէն ներս, համագործակցական մշակոյթ մը.
- Փիլիսոփայական ու քննական մտածողութեամբ՝ ինչպէ՛ս բանալ մտքի պատուհանները.
- Ինչպէ՛ս ապրիլ հայերէն լեզուն եւ հայերէնը դարձնել ապրող լեզու, շեշտը դրուած ըլլալով բազմալեզու կրթութեան եւ ուսուցիչներու պատրաստութեան վրայ.
- Ինչպէ՛ս կառուցել լեզուական ներսուզումի (immersion) բնորոշներ.
- Ինչպէ՛ս ներգրաւել ընթերցողներու եւ գրողներու սերունդ մը՝ դասարանային ստեղծարար գրագիտութեան մղում տալով:

Աւարտական նիստին, մասնակիցներէն խնդրուեցաւ, որ իրենց մտածումները կիսեն երկու հարցերու շուրջ: Նախ՝ իրեւ տնօրէններ, ի՞նչ քաղած էին աշխատանոցէն: Երկրորդ՝ ի՞նչ պիտի ըլլար իրենց յաջորդ քայլը:

Բոլոր տնօրէնները խանդավառ էին աշխատանոցի նիւթերով ու արդիւնքներով, ու կեռուզէին զանոնք անյապաղ կիսել իրենց ուսուցիչներուն, հոգաբարձութիւններուն եւ ծնողներուն հետ: Նկատելի էին յանձնառութիւնները՝ աշակերտներուն հետ աւելի յաճախ հայերէն խօսիլ, զանազան նիւթերու մասին անոնց հայերէնով ազատօրէն արտայայտուիլը քաջալերել, ուսուցչական պատրաստութեան ուղղութեամբ ներդրում կատարել, դասարաններէն ներս աշակերտներուն տարիքին յարմար հայերէն ընթերցանութեան գիրքեր ապահովել, եւ մանկավարժական մօտեցումները բարելաւելու ուղղուած նորանոր քայլերու դիմել: Մասնակիցի մը խօսքով, «լեզուական իւրացումը կարծածիս չափ դժուար իրագործելի չէ եղեր: Յարմար պատրաստութեամբ, բոլոր ուսուցիչները կրնան արդիւնաւէտ աշխատանք տանիլ՝ սահուն հայախօս աշակերտներ ունենալու համար»: Ուրիշ մասնակից մը աւելցուց. «Լեզուական ուսուցման օժանդակող բազմաթիւ նիւթեր կան: Դիւրաւ գտանելի են, արդիւնաւէտ են, ու պատրաստ՝

գործածուելու»:

Բոլոր մասնակիցները անդրադարձան, որ առանձին չեն այս հիմնական խնդիրներուն դէմ. բազմաթիւ մարտահրաւէրներ հասարակաց են, եւ լուծումները հաւաքական որոնումի արդիւնք ալ կրնան ըլլալ: «Շատ կարեւոր է, որ աւելի յաճախ հանդիպինք եւ մեր ամէն օր դիմագրաւած նմանօրինակ իրավիճակները միասին քննարկենք», ըսաւ տնօրէններէն մէկը:

«Այս ձեռնարկը անկիւնադարձային էր՝ դպրոցներու հետ կապուած մեր ծրագիրներուն մէջ», ըսաւ Հայկական Համայնքներու բաժանմունքի տնօրէն Ռազմիկ Փանոսեանը, «եւ շատ ուրախ ենք, որ UCLA-ի հետ միասնաբար կազմակերպեցինք զայն: Սրահին մէջ տիրող խանդավառութիւնը, տնօրէններուն յանձնառութիւնը, նաեւ՝ դպրոցներուն եւ հայերէն լեզուին վրայ այս աշխատանոցին ունենալիք ազդեցութիւնը կասկածէ վեր են: ԱՄՆ-ի եւ Գանատայի գրեթէ բոլոր հայկական ամէնօրեայ դպրոցներու տնօրէնները ներկայ էին, Արժանթինէն կարեւոր մասնակցութիւն մըն ալ կար: Աշխատանոցը մեզի նոր ներշնչում տուաւ մեր աշխատանքը շարունակելու՝ հայերէնը դարձնելու համար հնչեղ լեզու մը Սփիւռքի մէջ եւ Սփիւռքի համար»:

Աշխատանոցին նիստերը վարողներն էին. Տեպի Թալուքտար (Մանուկներու Փիլիսոփայութեան Կեդրոն, Ուաշինկթըն համալսարան, ԱՄՆ), Շուշան Կարապետեան (Ազգային ժառանգական Լեզուներու Պաշարի Կեդրոն, UCLA, ԱՄՆ), Անի Կարմիրեան (արեւմտահայերէնի վերակենդանացման ծրագիրներու պատասխանատու, «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութիւն, Փորթուկալ), Յակոբ Կիւլիւնճեան (արեւմտահայերէնի դասախօս, UCLA, ԱՄՆ), Էյմի Հիւլզ (անգլերէնի ուսուցչուհի, Մանչեսթըր շրջանային դպրոց, Հէյլտոն, ԱՄՆ), Կիլ Շմերլըր («Կրթական փոփոխութեան ղեկավարութիւն» ծրագրի տնօրէն, Պէնք Սթրիթ ուսուցչանոց, ԱՄՆ): Ռոպըրթ Մ. Ուրիու (քաղաքական գիտութիւններու փրոֆեսոր, UC Irvine, եւ Օրէնճ Քոսթ Կաքուէն ճափոնական դպրոցի տնօրէն, ԱՄՆ), Անահիտ Սարգիսեան (ուսուցիչ, հեղինակ եւ հրատարակիչ, Ֆրանսա), Անահիտ Տօնապետեան (հայերէնի ամպլիոնի վարիչ, Արեւելեան Լեզուներու եւ Քաղաքակրթութիւններու Ազգային Հիմնարկ, Ֆրանսա):

Աշխատանոցին մասնակցող տնօրէններն էին. Միացեալ Նահանգներ Գոյր Լուսիա Ալ Հայէք՝ Հայ Գոյրերու վարժարանի տնօրէն (Մանթոք, Գալիֆօրնիա) Արսինէ Աղազարեան՝ Ս. Աստուածածին Ռիչըրտ Թիւֆէնքեան Մանկամսուրի վարիչ (Կլենտէյլ, Գալիֆօրնիա) Կրէյս Անտոնեան՝ Գոուզեան-Ջաքարեան-Վասպուրական Ազգային վարժարանի տնօրէն (Ման Ֆրանսիսքօ, Գալիֆօրնիա) Մարալ Արոյեան-Պոյաճեան՝ Սահակ-Մեսրոպ Հայ Գրիստոնեայ վարժարանի տնօրէն (Ալթատինա, Գալիֆօրնիա) Լինա Արսլանեան՝ Մերտինեան Հայ Աւետարանական վարժարանի տնօրէն (Շըրմըն Օքս, Գալիֆօրնիա) Արփի Աւանդեան՝ ՀԲԸՄ Մանուկեան-Տեմիրճեան վարժարանի տնօրէն (Գընոկա Փարք, Գալիֆօրնիա) Մայքըլ Բրէթ՝ ՀԲԸՄ վաչէ եւ թամար Մանուկեան վարժարանի տնօրէն (Փասատինա, Գալիֆօրնիա) Սոնիա Գազանճեան՝ Հայ Գոյրերու վարժարանի Մանկամսուրի վարիչ (Մանթոք, Գալիֆօրնիա) Վէհիկ Գաբրիէլեան՝ Ս. Նահատակաց ՀՕՄ-ի Աշխէն Փիլաճեան Մանկամսուրի վարիչ (Նորթ Հիլս, Գալիֆօրնիա) Ժան Գոսաքեան՝ Սրբոց Նահատակաց Մարի Գապայեան Նախակրթարանի տնօրէն (Նորթ Հիլս, Գալիֆօրնիա) Սեդա Դաւիթեան-Մկրեան՝ Սրբոց Նահատակաց Ամէնօրեայ վարժարանի տնօրէն (Օքլընտ Կարտուն, Նու Եորք) Ալինէ Դուրեան՝ Ռոգ եւ Ալեք Փիլիպոս Ազգային վարժարանի տնօրէն (Լոս Անճելըս, Գալիֆօրնիա)



Կազմակերպութեամբ
 ԹԵՔԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
 Լոս Անճելըսի Մասնաճիւղին

Հանդիպում հայրենի գեղանկարիչ ՆԻԿՈԼ ԱՂԱԲԱԲԵԱՆԻ հետ
Հայասրանի Գոյնը

Հարցազրոյցը կը վարէ
ԼԻԼԻԹ ՔԷՅԵԱՆ

ՈՒՐԲԱԹ, ՓԵՏՐՈՒԲԱՐ 23, 2018
 երեկոյեան 7:30-ին

ԿԼԵՆՏԵՅԼԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՍՐԱՅ
 222 E. Harvard Street - Glendale
 Validated parking at Marketplace parking structure
 Harvard & Maryland

ՀԻՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ / ՄՈՒՏՔԸ ԱՋԱՏ

ՄԱՆԿԱԳԻՐ ՆՈՒՆԷ ՍԱՐԳԻՍԵԱՆ... ՆԱԵՒ ՆԿԱՐԻՉԸ



ԱՍՏՈՒՐ ԿԻՉԵԼԵԱՆ

Նունէ Սարգիսեան ծնած է Երեւան: Համալսարանական ուսումը ստացած է Երեւանի Պետական համալսարանի Ռոմանա-գերմանական բաժնին մէջ: Ան աւելցնում է գիտնական, ՀՀ երբեմնի վարչապետ, Միացեալ Թագաւորութեան այժմու դեսպան եւ ՀՀ նախագահական թեկնածու, Տոքթ. Արմէն Սարգիսեանի հետ:

Դեռ համալսարանական ուսանող՝ Ն. Սարգիսեանի հէքիաթները տպագրուած են սովետահայ մանկական ամսագիրերու մէջ: Ան ծանօթ անուն մը դարձաւ միջազգային գրական շրջանակներէն ներս որպէս մանկագիր, երբ անոր հէքիաթները հրատարակուեցան բացի հայերէնէ՝ նաեւ անգլերէն, ռուսերէն եւ ուկրաերէն լեզուներով:

Ժամանակին հանգամանօրէն անդրադարձած եմ Նունէ Սարգիսեանին որպէս գրող, եւ գրախօսած՝ անոր գիրքերը, բայց ինչ կը վերաբերի «Նունէ Սարգիսեանի նկարիչին», անկեղծ ըլլալու համար ըսեմ, որ զարմանքով կարդացի Everard Read (Էվերարա Ռիտ) պատկերասրահին ինծի դրկուած հրաւիրատուները, որով կը հրաւիրուէի Նունէ Սարգիսեանի նկարներու ցուցահանդէսի բացումին, 30 Յունուար, 2018-ին:

Գեղանկարիչ Էվարդ Այվագեանին իմացած էի տարիներ առաջ, որ Արուեստի Արքայական Ակադեմիային մէջ Նունէն դասախօսութիւն մը տուած էր Հայաստանի նկարիչներու մասին, արժանանալով մասնագէտ ունկնդիրներու՝ որոնց կարգին նաեւ՝ իր հիացումին: Մինչեւ հիմա կը յիշեմ Այվագեանին խօսքերը. «Ես մինչ այդ, նման մասնագիտական լուրջ ու չափազանց հետաքրքրական դասախօսութիւն չէի լսել Հայաստանի նկարիչներու մասին»:



Այվագեանի խօսքերը զարմանք չէին պատճառած ինծի, քանի տեղեակ էի Նունէի կենսագրութեան եւ գիտէի որ ան արուեստներու՝ յատկապէս նկարչական արուեստի պատմութեան մասնագէտ էր եւ Լոնտոնի Համալսարանի Կոլտսմիթս Բոլեմի

Արուեստագիտութեան բաժնին ունէր Մաքիստրոս Արուեստից կոչումը (MA): Զարմանալին այն էր, որ ցալդ տեղեակ չէի որ Նունէ Սարգիսեանը է նաեւ նկարիչ:

Արդ, հաճելի անակնկալ մը եղաւ ինծի համար Յունուար 30ի գիշերը ծանօթանալ Նունէ Սարգիսեանի նկարներուն եւ ողջունել զայն նաեւ... որպէս նկարիչ:

Յուցադրուած էին Նունէի գրեթէ ամբողջութեամբ սեւ ու սպիտակ



տակ ութ ստեղծագործութիւնները. "գրեթէ ամբողջութեամբ" ըսի, որովհետեւ նկարներէն ոմաց վրայ կար կարմրաւուն գոյնի թեթեւ հուլ մը:

Առաջին հայացքէն իսկ Նունէի վերացական (abstract) նկարները գիտ տպաւորեցին իրենց պարզութեամբ, անկեղծութեամբ յազեցած գիծերու եւ ձեւերու նրբութեամբ: Ի դէպ է նշել, որ Նունէի նկարները ունին ինքնատիպ ոճ: Անոնք ոչ միայն գերծ են ուրիշ նկարիչներու ազդեցութենէն, այլ նաեւ ստեղծագործուած չեն այս կամ այն նկարչական դպրոցին պատկանելու ճիգէն թելադրուած: Հեղինակին անկեղծ ու անկաշկանդ ապրումներէն ծնած ութ նկարներն ալ զծուած են մեղանով, ձեւքով պատրաստուած հնդկական թուղթի վրայ:

Հեղինակը ցուցադրուած նկարներէն մէկը կը կոչած "Թէյ Քենտինսկիի հետ" (Tea with Kendinsky): Թելադրուած նկարի խորագիրէն, դժուար չէ գուշակել որ Նունէ Սարգիսեան ոչ միայն բարձր կը գնահատէ ռուսական մեծ վարպետներէն մէկուն արուեստը, այլ նաեւ կը բաժնէ նկարչութեան նկատմամբ անոր ունեցած փիլիսոփայութիւնը: Քենտինսկիի բազմաթիւ ընդհանրացումներէն մէջ բերենք միայն երկուքը, որոնք որոշ չափով, իմ կարծիքով, նկարչական արուեստի հանդէպ Նունէ Սարգիսեանի մօտեցումը.

ՎԱՐԴԱՆԱՆՑԻ ԵՒ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՎԱՐԺԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ



Փաստենա քաղաքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ շաբաթօրեայ վարժարանը 10 Փետրուար 2018, Շաբաթ օր, աշակերտներու, ծնողներու եւ հիւրերու խանդավառ ներկայութեան տօնեց Ս. Վարդանանց տօնը եւ Տեառնդառաջը:

Յայտագիրը սկսաւ տէրունական աղօթքով եւ Հայաստանի Հանրապետութեան օրհներգով: Ապա մանկապարտէզի սաները սրահ մտան հանդիսական ձեւով: Անոնք որպէս Վարդաններ, զգեստաւորուած, սաղաւարտներով, վահաններով եւ սուրերով զինուած, տողանցեցին սրահին շուրջ, ապա բեմ բարձրացան: Ուսուցչուհի օր. Անի Մարտիկեանի եւ օգնականուհի օր. Էֆգին

Սէրայտարեանի առաջնորդութեամբ, փոքրիկ աշակերտները մաքուր առողջանութեամբ արտասանեցին Ս. Վարդանին եւ անոր քաջագործութիւններուն նուիրուած բանաստեղծութիւններ

ու երգեցին երգեր, մինչ օր. Մարալ Դաւիթեանի աշակերտները ներկայացուցին օրուան պատգամը:

Ապա հանդէս եկաւ Օր. Ազնիւ Սէրայտարեանը: Ան աշակերտներուն հասկնալի եւ պատկերալից բառերով բացատրեց ճակատամարտի հանգամանքները:

Միջոցառումը ունէր երկրորդ մաս՝ նորութիւն մը վարժարանի աշակերտներուն համար: Դպրոցի բակին մէջ վառուեցաւ աւանդական կրակը, որուն ուղեկցեցան ծխական պարն ու երգը: Աշակերտները, մեծամասնութիւնը սկսուտներ, առանց վարանելու, զոյգեր կազմեցին ու անցան կրակին վրայէն:

Վարժարանի տնօրէն Նորայր Տատուրեանը շնորհակալութիւն յայտնեց բոլոր ծնողներուն, որ հայեցի դաստիարակութեան եւ ինքնութեան անաղարտ պահպանման համար ամէն շաբաթ կու գան վարժարան ու նեցուկ կը կանգնին անոր բոլոր ծրագիրներուն:

եանի մօտեցումը.

1. «Նկարիչը ո՛չ միայն իր տեսողութիւնը, այլ նաեւ իր հոգին պէտք է զարգացնէ»:

2. «Արուեստի մէջ պէտք է գոյութիւն չունի, քանի որ արուեստը կաշկանդում չի ճանչնար»:

Յուցածանդէսին նուիրուած յայտագրին մէջ Ն. Սարգիսեան արուեստի նկատմամբ իր ունեցած փիլիսոփայութեան կը բնութագրէ հետեւեալ բառերով.

«Ստեղծագործելը ինծի եր-

ջանկութիւն եւ գոհունակութիւն կու տայ: ...Անունս պարուրածեւ (spirital) կը ստորագրեմ [որ] կը խորհրդանշէ յաւիտենականութիւնը. Թէ՛ եւ կեանքը յաւիտենական է, բայց մենք եկած ենք այս աշխարհ բան մը ընելու՝ ստեղծագործութեան մը ծնունդ տալու համար»:

Տարիներ առաջ Նունէ Սարգիսեանին մաղթեցի նորանոր յաջողութիւններ որպէս գրող, այսօր նոյն մաղթանքները կը հասցնէմ իրեն՝ որպէս նկարիչ:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 125,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State: ----- Zip Code: -----
 Country: -----
 Tel: ----- Email: -----

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ 3ԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

- Ամէն ինչ ունի իր պատճառը: Մեր կեանքին մէջ, ամէն օր, կը յայտնուին նոր ու տարբեր մարդիկ: Եւ, հաւատացէք, ատիկա պատահական չէ: Իւրաքանչիւր նոր մարդ իր հետ կը բերէ եզակի փորձ, որ այսպէս թէ այնպէս կ'ազդէ ձեր կեանքին վրայ:

Անոնցմէ ոմանք կրնան արժէքաւոր դաս տալ, ոմանք ալ որեւէ առանձնաշատուկ բան բացայայտել ձեր մէջ, եւ միայն քիչերը կրնան միայն իրենց ներկայութեամբ ձեզի երջանիկ դարձնել:

Այդ պատճառով ձեր բոլոր յարաբերութիւնները աւելի խելացի եւ փորձառու դառնալու կամ պարզապէս սեփական ցանկութիւնները իրականացնելու հնարաւորութիւն դիտարկեցէք:

- Մարդոց հետ վարուեցէք այնպէս, ինչպէս կ'ուզէք որ վարուին ձեր հետ: Ոմանք, իբրեւ կանոն, այնքան կը կեղերոնանան սեփական ցանկութիւններու վրայ, որ կը մոռնան շրջապատող մարդոց մասին, որոնք նոյնպէս կրնան որեւէ բան սպասել: Եթէ միշտ դժգոհիք, բողաւէք եւ ձեր գոլգոլները մեղադրէք քան ամէնուն համար, ինչ չէ կըրցած տալ ձեզի, ուստի նաեւ մի սպասէք ամէնօրեայ սիրոյ խոստովանութիւններ եւ ուշադրութիւն:

- Ձեզի մի ստիպէք որեւէ մէկը ձեր կեանքին մէջ պահելու:

Երբեմն կը պատահի, որ ճշմարտութիւնը ուղիղ կը նայի ձեր աչքերուն, բայց դուք չէք կրնար կամ չէք փափաքիր ընդունիլ զայն: Ձեր յարաբերութիւնները

ըր շատոնց սպառած են, ձեր գոլգոլները այլեւս չի կրնար ձեզի փոխադարձութեամբ պատասխանել, ինչպէս՝ նախապէս: Ատիկա ակնյայտ նշան է, որ դեռ ձեզի համար մտերիմ մարդը կ'ուզէ հեռանալ: Եւ միայն ձեր յամառութիւնն է զինք ձեր կողքին պահողը: Դուք կը շարունակէք յուսալ եւ աղօթել, որ ամէն ինչ նախկինի նման ըլլայ: Բայց որքա՞ն կրնաք այդպէս շարունակել: Եթէ որեւէ մէկը չի փափաքիր ձեր հետ ըլլալ, ոչինչ կրնայ զինք երկար պահել ձեր կողքին: Խնդրելն ու յուսալը, որ ան ձեր հետ ըլլայ, միայն պիտի բարդացնէ երկուքիդ կեանքը: Ժամանակն է ձգելու զինք եւ շարունակելու կեանքը:

- Մարդիկ կը փոխուին եւ չէք կրնար մեղադրել զանոնք այդ հարցով: Մարդոց զգացմունքները, մտքերը ժամանակի հետ կը փոխուին: Ատիկա բնական է եւ տեղի կ'ունենայ բոլորին հետ:

Կը պատահի, որ այդ փոփոխութիւնները այնքան փոխեն մարդու բնաւորութիւնը, որ ձեր գոլգոլները կ'ընկերոջ մէջ այլեւս չէք տեսներ ձեր ամենամտերիմ մարդը: Նոյնը կրնայ տեղի ունենալ նաեւ ձեր հետ: Հետաքրքրութիւնները այլեւս այն չեն, ճաշակները տարբեր են, նոյնիսկ մանրուքներու հանդէպ փոխուած է վերաբերմունքը, կատակներն ալ այլեւս ծիծաղելի չեն թուիր: Նման իրավիճակի մէջ պէտք է որեւէ մէկը մեղադրէք: Պարզապէս հարկաւոր է հասկնալ, որ հիմա ամէն ինչ փոխուած է եւ ձեր ուղիները կը բաժնուին:

ՀԻԱՍԹԱՓՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԶՎԱՆԱԿՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐ

Կրնաս սթափ վիճակով նայիլ իրավիճակին: Ո՛չ ոք կատարեալ է, ամենակարող եւ ունակ՝ յաւերժ սիրելի պատրանք մնալու: Կարելի է մտածել՝ ինչի՞ մասին ըսել, բայց նոյնիսկ ամենահաճելի ինքնախաբէութիւնը որեւէ արտասովոր հաճոյք չի բերեր քեզի որքան գիտակցութիւնը, որ ամբողջութեամբ կը վերահսկես իրավիճակը եւ գիտես ամբողջ ճշմարտութիւնը:

Հիասթափութիւնները կ'օգնեն հասունալու եւ զարգանալու: Հասունալու, եւ ո՛չ թէ ծերանալու: Հիասթափութիւնները քեզի կը սորվեցնեն չկեղերոնանալ մէկ բանի վրայ՝ ըլլալ որեւէ մէկը, առաջ անցնիլ՝ չնայելով ո՛չ մէկ բանի: Հիասթափութիւններուն շնորհիւ է, որ մարդը իր ուժերուն վստահ կը դառնայ եւ կը կարենայ յաղթահարել սեփական ցաւը:

Կը սկսիս ամէն ինչի աւելի պարզ նայիլ: Մանկութեան տարիներուն առաջին հիասթափութեանն (սիրելիս, Կաղանդ պապա գոլգոլիւն չունի) մինչեւ ամենահա-

սունն ու գիտակցուածը, մարդը երկար ճանապարհ կ'անցնի, որուն ընթացքին շատ բան կը վերաբերէ զինք: Առաջին վատ գնահատականը, առաջին սէրը, առաջին «մենք ձեզի կը հեռաձայնենք»-ը, առաջին դաւաճանութիւնը, մտերիմ մարդու մահը, այս ամէնը իսկական ողբերգութիւն են: Բայց ժամանակի ընթացքին, այլ հիասթափութիւններէ ետք, ամէն ինչ կը փոխուի: Ատիկա լաւ է, թէ՛ վատ, դուն պէտք է որոշես, բայց որքան աւելի քիչ անհանգստանաս գոլր տեղը, այնքան աւելի շատ կը պահպանուին նեարդային բջիջներդ:

Հիասթափութիւնները կ'օգնեն, որ սիրես եւ գնահատես դուն քեզի: Երբ կը հասկնաս, որ «լաւ բանը» չես կրնար բացարձակի վերածել, եւ ամէն ինչ մետալի հակառակ կողմը ունի: Նոր գործառոյթ մը կ'աւելնայ դուն քեզի իսկապէս սիրելու, դուն քեզի իբրեւ զլիսաւոր արժէք ընդունելու եւ ապրելու ուրախութեանդ համար, այլ ո՛չ ուրիշի:

3 ՈՍԿԷ ԿԱՆՈՆ՝ ԸՆԿԵՐՈՒԳԻՆԵՐՈՒՆ ԶՈՅՊԻ ՄԱՍԻՆ ՊԱՏՄԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Անկեղծ պէտք է ըլլալ եւ խոստովանիլ, որ բոլորս ալ որեւէ մէկուն կը պատմենք մեր յարաբերութիւններուն մասին՝ սկսեալ անակնկալէն, մինչեւ, նոյնիսկ, կենցաղային վէճերու մասին: Քննարկելը բնական է: Սակայն, երբեմն, դժուար է ընտրել ճիշդ գրուցակիցը կամ հասկնալ, թէ ինչը կարելի է պատմել, ինչը՝ ո՛չ:

Նոյնիսկ մտերիմ շրջապատի մէջ կրնան յայտնուիլ մարդիկ, որոնք կրնան այդ տեղեկատուութիւնը ձեր դէմ օգտագործել:

Մասնագէտներու կարծիքով՝ եթէ պէտք է որեւէ բան պատմել որոշ նպատակներու համար, ուստի կարելի է ըսել, եթէ ո՛չ՝ ուրեմն խօսելէ առաջ կ'արժէ մտածել: Ահա ինչ պէտք է յիշել մինչեւ յարաբերութիւններու քննարկումը սկսիլը.

1) Արդեօ՞ք շատ յաճախ չէք խօսիր անոր մասին՝ Մենք մեր ընկերներուն յաճախ կը պատմենք որեւէ բան: Սակայն, եթէ ձեր պատմելը կը սկսի բարեւելով եւ կ'աւարտի ցտեսութիւն մաղթելով, ատիկա գեղեցիկ չէ: Եթէ դուք շփման մէջ կը գերակշռէք մշտապէս ձեր վրայ գրաւել ուշադրու-

թիւնը, սակայն միաժամանակ չէք գտնուիր խոր ճգնաժամի մէջ՝ ուստի դուք չափը կ'անցընէք:

2) Արդեօ՞ք ուշադիր էք մանրուքներու հանդէպ՝ Մինչեւ ձեր ընկերը գովաբանելը, մտածեցէք՝ արդեօ՞ք ատիկա հոգեբանօրէն չ'ազդեր ձեր ընկերուհիներուն վրայ: Հաւանաբար անոնց բախտը չէ բերած յարաբերութիւններու մէջ, իսկ դուք կը գովէք ձեր արքայազնը: Մտածեցէք նաեւ ձեր գոյգին մասին, հաւանաբար անոր համար հաճելի չէ, որ դուք մանրամասներ կը բացայայտէք ձեր անձնական յարաբերութիւններուն վերաբերեալ: Խօսիլ սկսելէ առաջ մտածեցէք՝ արդեօ՞ք դուք որեւէ մէկը չէք նեղացներ:

3) Դուք կ'ուզէք բամբասե՞լ, թէ՞ ծիծաղիլ՝ Այն ամէնը, ինչ որ հաճելի չէ ձեր գոյգին, պէտք է պատմել ընկերներուն: Ի հարկէ ծիծաղելի պահերը կարելի է լսելի դարձնել եւ ուրախանալ, սակայն միայն յատուկեմ մարդոց հետ, եւ մինչ այդ՝ գոյգին հարցնելու պարագային: Յարգանքը գոյգին հանդէպ առաջնայինն է: Եւ յիշեցէք՝ երբեք մի պատմէք անձնական որեւէ բան ոչ մտերիմ մարդու:

ԱՆՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԻ՛ ՄԱՏՆԷՔ ՄԱՆՐԱԹԵԼԵՐԸ

Տարիքոտ մարդը օրուան ընթացքին պէտք է 20-30 կրամ մանրաթել ստանայ: Սակայն, միջինը, մարմինը կը ստանայ այս կարեւոր նիւթին անհրաժեշտ չափին միայն կէսը: Պատճառը այն է, որ մենք աւելի շատ մշակուած մթերք կ'օգտագործենք, որոնց մէջ մանրաթելերուն քանակը քիչ է: Այս կարեւոր նիւթը կը նպաստէ նիւթափոխանակութեան համակարգի անխափան աշխատանքին: Ատիկա մանրաթելերով հարուստ մթերքը սննդակարգ ներառելու միակ պատճառը չէ:

Ի՞նչ տեղի կ'ունենայ մարմնի մէջ, երբ մանրաթելերուն մակարդակը չի բաւարարեր անոր.

1) Փորկապոլթիւն: Մանրաթելը, որ մարմնի մէջ վերամշակման չ'ենթարկուի, կ'օգնէ նիւթափոխանակութեան արգասիքներու դուրս գալուն: Եթէ անոր մակարդակը բաւարար չէ մարմնի մէջ, կրնայ փորկապոլթիւն յառաջանալ: Կարելի է նաեւ յաւելումներ ընդունիլ բժիշկի նշանակումով, սակայն, հարկաւոր է այս նիւթը ստանալ սնունդէն:

2) Կը նկատուի մշտական սովի զգացում: Քիչ քանակով մանրաթելեր պարունակող սննդակարգի պարագային կրնաք մշտական սովի զգացում ունենալ: Մանրաթելերը մարմնին մէջ շատ աւելի երկար կը մնան քան միւս սննդարար նիւթերը, որ կը նշանակէ, թէ աւելի

երկար ժամանակ յագեցած ըլլալու զգացում կ'ունենաք:

3) Կը մեծնայ սրտանօթային հիւանդութիւններու յառաջացման հաւանականութիւնը: Խոնմը մը հետագոտութիւնները ցոյց կու տան, որ որքան շատ մանրաթելեր կը ստանաք, այնքան փոքր է քոլեսթերոլի մակարդակի բարձրացման հաւանականութիւնը: Քոլեսթերոլն ու մանրաթելերը մարմնէն դուրս կու գան միասին: Ուսումնասիրութիւնները նաեւ ցոյց կու տան, որ մարդիկ, որոնց կը բաւարարէ մանրաթելերուն մակարդակը, աւելի քիչ կը մահանան սիրտանօթային հիւանդութիւններէ:

Բացի այդ, մանրաթելերը կրնան նպաստել աւելորդ կշիռ քնն ազատուելուն, որ ուղղակիօրէն կապուած է սրտի առողջութեան հետ:

4) Արեան մէջ շաքարի մակարդակը կրնայ դուրս գալ վերահսկողութենէ: Ածխաջուրներու բարձր մակարդակը եւ մանրաթելերու ցած մակարդակը կտրուկ կը բարձրացնեն շաքարի մակարդակը արեան մէջ, որ կը սպառնայ ուժեղութեւն արագ անկումին: Շաքարի մակարդակի մշտական տատանումները կրնան յանգեցնել քնկոտութեան, մեծցնել շաքարախտի յառաջացման հաւանականութիւնը:

Անուշադրութեան մի՛ մատնէք մանրաթելերը Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

Սիրահարներու Օրուայ «Հիւնոր»

- Սերը այդպէս եւ պարզապէս չ'ստեղծուիր:
- Սերը գոհողութիւն է, բայց առանց գոհ դառնալու:
- Սերը մնալու կենցաղ է:
- Սերը փոխ չ'առնուիր:
- Սերը կը դարձանէ, կամ ալ կը հիւանդացնէ:
- Սերը դրախտ մը կը ստեղծէ, յետոյ ալ դժոխք:
- Ոչ բոլորը սիրոյ արժանի են, բայց լաւ է սիրել բոլորին:
- Սիրեցէք ձեր թշնամիները եւ դրացիները, որպէսզի հանգիստ ապրիք:
- Սերը օրէնք չ'ունի: Միշտ սիրելն է օրէնքը:

- Սերը եւ դատողութիւնը գրեթէ չ'են հանդիպիր:
- Սերը սխալները կը գոցէ . բայց առանց սիրոյ ահագին են սխալները:
- Եթէ սերը կոյր է, ձեր աչքերը բացիք:
- Աւելի մեռած բան չկայ, քան մեռած սերը:
- Եթէ իրոք սխալած էք սիրոյ մէջ, ընդունեցէք այդ, բայց ոչ քսան տարի ետք:
- Սիրով՝ կ'որ կը դառնայ երկրագունդը իսկ առանց սիրոյ կրնայ կենալ:
- Մարդիկ սիրով կ'աճին. Երբեք մի խնայէք ձեր Սերը:

Հայ-Մեքսիկական Մշակոյթի Շաբաթ

Շարունակուած էջ 8-էն

Միութեան կեդրոնին մէջ ցուցադրուեցաւ մեքսիկական «Աշակերտը» ֆիլմը, իսկ Փետրուար 8-ին «Կրէնթ» երկրորդական վարժարանին մէջ տեղի ունեցաւ գեղարուեստական ձեռնարկ:

Փետրուար 8-ի երեկոյեան, ժամը 7-ին, Լոս Անճելոսի Մեքսիքայի հիւպատոսարանին մէջ տեղի ունեցաւ «Հայաստան, վաղեմի եւ յաւիտենական» անուամբ լուսանկարչական ցուցահանդէսը եւ «Խոստումը» ֆիլմի ցուցադրութիւնը:

Ուրբաթ, Փետրուար 9-ի առաւօտեան, Մետիսըն միջնակարգ դպրոցին մէջ տեղի ունեցաւ աշակերտական ձեռնարկ: Իսկ երեկոյեան, Հայաստանի հիւպատոսարանին մէջ տեղի ունեցաւ «Մշակոյթի Շաբթուան» փակման ընդունելութիւն մը:

Յիշենք, թէ այս տարի Յունուար 14-ին Հայաստան եւ Մեքսիքա նշեցին իրենց դիւանագիտական չարաբերութեանց 26-ամեակը: Մեքսիքայի մէջ ունինք փոքրաթիւ գաղութ մը, Հայ Առաքելական Եկեղեցու թեմ, որ կապուած է ԱՄՆ-ի Արեւմտեան թեմին:

Առաջին հայը, որ Մեքսիքա հաստատուած է, 1632 թուականին եղած է Ֆրանսիսքո Մարթինը: Հայոց ցեղասպանութենէն ետք աւելի մեծ թիւով հայեր Մեքսիքա գաղթած են, անկէ Ա.Մ.Ն. անցած կամ Արժանիին գացած են այս երկու

տեղերը աւելի հայ ունենալուն համար:

Մեքսիքայի մէջ ունինք շատ նշանաւոր դերասանուհի Ռոսա Կլորիա Չաբոյեան (Lola La Trailera) անունով: Իսկ կօշիկի մեծ գործարանի մը տէրը էնրիքէ Համբարձումեան:

Լատին Ամերիկայի պետական ամէնէն ծանօթ համալսարանն է Նիւ Մեքսիքայի պետական համալսարանը, որուն նախագահն էր Դոկտ. Փրոֆ. Խոսէ Սարուխան, անոր որդին՝ Արթուրօ Սարուխան, 7 տարի եղած է Մեքսիքայի դեսպան եւ դեսպանի փոխանորդ Ա.Մ.Ն.ի մէջ: Հայութիւնը լաւ կը ճանչնայ Արթուրօ Սարուխանը Լոս Անճելոս յաճախակի այցելութիւններով եւ հայերուն հետ շփուելով:

Նմանապէս, Մեքսիքայի հեռատեսիլի ասպարէզին մէջ եւ զանազան կայաններու մեծանուն տնօրէնի ու փոխ-նախագահի անունն է Ռուբէն Քէօսէեան:

Հայաստան դէպի Մեքսիքա կ'արտածէ Cable Box, Electrical Circuits եւ X-Ray-ի նկարահանող մեքենաներ, իսկ Մեքսիքա Հայաստանին կը դրկէ 3 անիւով մոթորսայքըլներ, սուրճ եւ անշուշտ թեքիլլա խմիչքը:

Հաճելի եւ հետաքրքրական շաբաթ մըն էր իրապէս, որուն համար կը շնորհաւորենք Ա.Մ.Ն.ի էջ գործող Հայաստանի դիւանագիտական պատասխանատուները, այս գնահատելի աշխատանքին համար:

Թաթուլ Մանասերեան

Շարունակուած էջ 1-էն

տատեղեր՝ պետական հատուածը, յատկապէս փոքր պիզնեսը: Ծրագրերի իրագործման գրասենեակները մասսայական փակումներ տեղի ունեցան, բացառութեամբ մէկ-երկուսի, նաեւ օպտիմալացման ծրագրերի շրջանակներում ու համայնքների խոշորացման արդիւնքում եղան աշխատանքի կրճատումներ: Համայնքների խոշորացումն էլ իր հերթին լուրջ, բացասական հետեւանքների հանգեցնեց: Միշտ չէ, որ հնարաւոր է դիմագրաւել այն դժուարութիւններին, որոնք կան:

- 2018 թուականի Յունուարի 1-ից մեր հանրապետութիւնում որոշ ապրանքատեսակներ թանկացան: Սրան գուզահեռ թեկուզ փոքր քանակի աշխատատեղեր չէ՞ն ստեղծուել: Ստացուած է՝ գնաճին գուզահեռ ոչ միայն աշխատավարձերը չեն բարձրանում, այլեւ նոր աշխատատեղեր չեն ստեղծուում:

- Հիմնականում աշխատատեղերն հանքարդիւնաբերութեան ոլորտում են, միւս ճիւղերում շատ աւելի նուազ քանակութեամբ աշխատատեղեր են ստեղծուել:

- Հայաստանի տնտեսութիւնը կարծես տեղում դոփում է: Արդեօք մեզ անհրաժեշտ են տնտեսական ռեֆորմներ, եթէ այո, ապա ի՞նչ ճանապարհով դրանք կարելի է կեանքի կոչել:

- Նախեւառաջ ռեֆորմներ նախաձեռնողները պէտք է գիտելիքների բաւարար մակարդակ ունենան: Եթէ անդրադառնում ենք ռեֆորմներին, նկատի ունենք ռազմավարական բնոյթի փոփոխութիւնների անհրաժեշտութիւնը: Կառավարութեան կառուցուածքում

ստեղծուեց այդպիսի օղակ՝ Ռագմավարական նախաձեռնութիւնների կեդրոն, սակայն, ցաւօք սրտի ոչ այդ կեդրոնը, ոչ էլ Չագացման հայկական հիմնադրամը, միւս կողմից նաեւ Համահայկական բանկը ոչ միայն չեն նպաստում զարգացման ծրագրերին, այլեւ դրանց դեկավարները բանիմացութեան լուրջ դեֆիցիտ ունեն: Բոլոր երեք կառուցներն էլ դեկավարում են Հայաստանը չճանաչող, մեր երկրի մարդկային ռեսուրսներին անծանօթ մարդիկ: Այս առումով ռեֆորմներն արդիւնաւէտ չեն կարող լինել:

- Ըստ ձեզ ինչու՞ է Հայաստանում սոցիալական բեւեռացումն այդքան վառ ձեւով արտայայտուած:

- Դրա պատճառներից մէկն այն է, որ ոչ միայն միջին խաւ ձեւաւորելու համար քայլեր չեն արւում, այլեւ եղած միջին խաւն աւելի շատ տրոհւում է երկու մասի՝ մի մասը, եթէ կարող են հարուստների շերտն են համարում, մի զգալի մասն էլ գրկուելով իրենց եկամուտներից դառնում են աղքատներ:

- Ինչպէ՞ս կ'անդրադառնայ եկամտահարկի բարձրացումը փոքր եւ միջին բիզնեսի զարգացման վրայ:

- Ես չեմ կարծում, որ եկամտահարկի բարձրացումն էական ազդեցութիւն կ'ունենայ փոքր եւ միջին բիզնեսի զարգացման վրայ, որովհետեւ փոքր բիզնեսի վրայ դա չի տարածուում, միջին բիզնեսի համար այդ շեմը բարձրացուած է: Ես մի վտանգաւոր միտում եմ տեսնում, որ եթէ աւելանում է այդ հարկը, ապա առանձին բիզնեսներ փորձելու են նաեւ ստուերային տնտեսութիւններ ձեւաւորել:

ԱՄԵՐԻԿԱՅ ԹԵՄԸ

Շարունակուած էջ 14-էն

ւոր կալուածներու բռնի գրաւման որպէս հետեւանք: Կոնդակը կը յայտնէր որ Մայր Աթոռ պաշտօնապէս բողոք բարձրացուցած էր կատարուած անարդարութեան դէմ, թելադրելով որ «Ամերիկայի Հայ Եկեղեցուց բոլոր գաւակները եւս, իրենց բողոքի արդար ձայնը միացնեն եկեղեցուց ընտրեալ Հայրապետին»: Տեղապահ ընթերցել կուտար սոյն Կոնդակը թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ:

Շահէ Ծ. Վարդապետի հետեւողական Գործը

Երբ Ամերիկահայ Թեմի նոր Առաջնորդը Տիրայր Եպիսկոպոս Տ. Յովհաննէսեան ժամանեց Միացեալ Նահանգներ, Շահէ Ծ. Վրդ. շարունակեց Պոսթոնի համայնքի հովուական իր պաշտօնը մինչեւ 1930, տասնըջորտ տարի շարունակ, եւ իր շնորհիւ Պոստոն ունեցաւ իր նախկին եկեղեցին «որուն կշիռը քիչ ատենէն զգալի եղաւ թեմի ծառայութենէն ներս»: 1930-ին, երբ Աթոռակից Բաբգէն Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ գլուխն անցած էր Աթոռի կազմակերպչական աշխատանքին, Տ.Տ. Սահակ Կաթողիկոսի տնօրինութեամբ Շահէ Ծ. Վարդապետ Անթիլիաս հրաւիրեց որպէս տեսուչ նորահաստատ Դպրեվանքին: Իսկոյն Անթիլիասի մէջ 1931 Մայիս 24-ին եպիսկոպոս ձեռնադրուելով Տ.Տ. Բաբգէն Կաթողիկոսի ձեռամբ, Շահէ Եպիսկոպոս Գասպարեան հինգ տարուան համար իր նուիրեալ աշխատանքով ծաղկեցուց Դպրեվանքը: Ամերիկա վերադառնալու իր իղձը յայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Խորէն Ա.Մուրաբեկեանին անձամբ Մայր Աթոռ ուխտի մեկնելով: Դժբախտաբար սակայն Երեւանի պանդոկին մէջ 1935-ին յանկարծամահ կ'ըլլար խոր սուզի մատնելով Կիլիկեան Աթոռն ու Ամերիկայի թեմը:

Տիրայր Արքեպիսկոպոս Տ. Յովհաննէսեան Թեմակալ Առաջնորդ Ամերիկահայ Թեմի (1921-1927)

Մայր Աթոռի միաբան Տ. Տիրայր Արքեպ. Տ. Յովհաննէսեան Գէորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսէն եպիսկոպոս ձեռնադրուած էր 1917 թուին ու կը վարէր Մայր Աթոռի դիւանապետի պաշտօնը երբ 1920 Մայիսին Ամերիկահայ Թեմին Առաջնորդ կ'ընտրուէր: Յաջորդ տարուան Մարտ ամսուն Ուսուր կը հասնէր ու կը ստանձնէր իր պաշտօնը երբ Ամերիկայի հայութեան թիւը ստուարացած էր Մեծ Եղեռնի հետեւանքով: Իր նախագահութեամբ առաջին Թեմական Ժողովը կը գումարուէր 1921 Օգոստոս 21-ին ի ներկայութեան 15 համայնքներէ եկած 44 պատգամաւորներու՝ 35 աշխարհական եւ 9 եկեղեցականներէ: 1923 թուի Թեմական Ժողովը կ'որոշէր Ամերիկահայ Թեմի Առաջ-

նորդարանը Պոստոն փոխադրել, իսկ 1927 թուի Ժողովն ալ կ'որոշէր գայն վերջնականապէս Նիւ Եորք հաստատել: Տիրայր Արքեպիսկոպոս եօթ տարի կը վարէր իր պաշտօնը արդիւնաւէտ կերպով, եւ առաջին պատեհութեամբ երկու քահանաներ կը ձեռնադրէր 1922-ին Տիթրոյթի եւ 1927-ին Ֆիլատելֆիոյ համայնքներուն համար:

Թեմին նիւթական պայմանները նեղ էին եւ առաջնորդարանը պարտքերու տակ մնացած ինչպէս թիւերով կը հաստատեն ժամանակակից տեղեկագիրներ: Այդուհանդերձ, Տիրայր Արքեպիսկոպոս իր շրջանի աւարտին իր հրաժարականը կը ներկայացնէր Կեդրոնական Վարչութեան իր 1928 Օգոստոս 14-ի գրութեամբ զոր նկատի կ'առնէր Հոկտեմբերին գումարուած Թեմական Պատգամաւորական Ժողովը: Գաղտնի քուէարկութեամբ եւ բարձր գնահատանքով ժողովը կ'ընտրուէր Սրբազան Հօր հրաժարականը «խորապէս գնահատելով եօթ տարիներու ընթացքին անոր թափած ջանքերը եւ աշխատութիւնները յօգուտ Հայ Եկեղեցուց զօրացման ու պայծառացման»: Տիրայր Արքեպիսկոպոսի պաշտօնավարութեան աւարտին Ամերիկահայ Թեմին մէջ կը գործէին 19 հայ եկեղեցիներ, որոնցմէ 10-ը հիմնադրուած եւ օծուած էին իր ձեռքով: Ըստ նոյն վիճակացոյցին հիւսիսային եւ հարաւային Ամերիկայի մէջ պաշտօնավարող հայ հոգեւորականներու թիւը 29 էր, իսկ անպաշտօն՝ վեց:

Գալիֆորնիոյ (Արեւմտեան) Թեմը

Տիրայր Արքեպիսկոպոսի օրով կարեւոր որոշում մը եւս կ'առնէր Թեմական Պատգամաւորական Ժողովը ու գայն կը յանձնէր Տ. Տ. Գէորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինութեան: Ամերիկայի Թեմին աշխարհագրական շատ տարածուն սահմանները նկատի ունենալով որոշեցին Գալիֆորնիոյ նահանգը առանձին թեմ հաստատել որ յետագային աճելով եւ ուճանալով կազմեց լայնածաւալ Ամերիկայի Արեւմտեան Թեմը, երկրի արեւմտեան նահանգներն ալ ընդգրկելով:

Տ.Տ. Գէորգ Ե. Կաթողիկոսի 1927 թուի Նոյեմբեր 28-ի Կոնդակով Գալիֆորնիոյ Թեմը կը հաստատուէր որպէս ինքնուրույն թեմ իւրաքանչիւր Կանոնադրութեամբ, որուն առաջին Առաջնորդը ընտրուեցաւ Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատուրեան, նախկին Առաջնորդը Տրապիզոնի Թեմին: Առաջնորդը իր պաշտօնին ձեռնարկեց 1928 Մայիսին, կեդրոն ընտրելով Ֆրեզնօ հայաշատ քաղաքը: Թեմի առաջնորդարանը յետագային Լոս Անճելոսի շրջան փոխադրուելով իր վերջնական կայքը հաստատեց եւ ծաղկեցուց հարեւան Պըրպէնք քաղաքի կեդրոնական պողոտային վրայ առաջնորդութեան ներքեւ վաստակաշատ Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեանի:



ՄԱՅԱԶԴ



ՌԱՖԻՔ ԽԱՅԱՅԱՆ
(Ծննդի օրը՝ Յուլի 23, 1947, Պեյզեր, Լիբանան)

Սրտի դառն կակիծով կը գոժենք մեր սիրեցեալ ամուսնոջն, հօր, եղբոր եւ հարազատին ՌԱՖԻՔ ԽԱՅԱՅԱՆի մահը, որ պատահեցաւ Կիրակի, Փետրուար 11, 2018ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Շաբաթ, Փետրուար 17, 2018, առաւօտեան ժամը 10:00ին, Սբ. Պետրոս Եկեղեցւոյ մէջ, 17231 Sherman Way, Van Nuys, CA 91406, ապա թաղումը Oakwood Memorial Park, 22601 Lassen Street, Chatsworth, CA 91311:

- Սգակիրներ՝ Այրին՝ Սիլվա Էքիզեան
- Որդին՝ Փաթրիք Էքիզեան եւ դուստրը՝ Գարէն Էքիզեան
- Եղբայրը՝ Տիգրան եւ Մելո Էքիզեան
- Եղբոր զաւակները՝ Սամ եւ Թամար Էքիզեան եւ զաւակունք Սերժ եւ Ալին Էքիզեան եւ զաւակունք
- Քույրը՝ Արփի Արթիւնեան (Փարիզ)
- Քրոջ զաւակները՝ Ժան-Լիւք եւ Սաթի Ռէմոնտ եւ զաւակունք (Փարիզ)
- Իվ եւ Թանիա Սերվը եւ զաւակունք (Փարիզ)
- Ջոքանչը՝ Արմէնուհի Լորենցեան
- Աներձագները՝ Ռաֆֆի եւ Լիսա Լորենցեան եւ զաւակունք Վազգէն Լորենցեան
- եւ համայն Ադամեան, Աղտամլեան, Ներսէսեան, Կարապետեան, Քէտէրեան, Տէրպապեան, Փելթեքեան, Լորենցեան, Աթայեան, Ֆերմանեան, Չետիքեան, Կիւլեան, Գարակէօզեան ընտանիքներն ու հարազատները:
- Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել՝ Վան Նալսի Սբ. Պետրոս Եկեղեցւոյ կամ ՀԲԸՄի Մարի Մանուկեան վարժարանին:

ՑԱԲԱԿՑՈՒԹԻՒՆ

Իրենց հարազատին ու բարեկամին՝ ՌԱՖԻՔ ԽԱՅԱՅԱՆ-ի մահուան տխուր առթիւ, Տէր եւ Տիկին Տիրան եւ Մարգրիտ ձէրէճեան իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին, զաւակներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

«ՁԱՐԳԱՑՈՒՄ ՍԵՐ ՈՒԺԵՐՈՎ»

Շարունակուած էջ 15-էն

Անգին Իսկաջեան՝ Ռան եւ Գոհարիկ Գաբրիէլ Մանկամուրի վարիչ (Փիքո Րիվերա, Գալիֆորնիա)

Դաւիթ Ղուկասեան՝ Մերոպեան Ազգային վարժարանի տնօրէն (Փիքո Րիվերա, Գալիֆորնիա)

Շահէ Մանկրեան՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Ա. եւ Մ. Յովսէփեան վարժարանի տնօրէն (Փասատինա, Գալիֆորնիա)

Քրիսթինա Մովսէսեան՝ ՀՕՄ-ի "Մայր" Մանածիւղի Մարի Փոստոյեան Մանկամուրի վարիչ (Լոս Անձելըս, Գալիֆորնիա)

Քոյր Էմմա Մուսայեան՝ Հայ Քոյրերու վարժարանի տնօրէն (Րատնոր, Փենսիլվանիա)

Սօսի Շանլեան՝ Սրբոց Նահատակաց Ֆերահեան Երկրորդական վարժարանի տնօրէն (Էնսինօ, Գալիֆորնիա)

Սանան Շիրինեան՝ Արի Կիրակոս Մինասեան Ազգային վարժարանի տնօրէն (Սանթա Անա, Գալիֆորնիա)

Կարին Չուքատարեան՝ Լեոն եւ Յասմիկ Թաւլեան Մանկամուրի վարիչ (Փասատինա, Գալիֆորնիա)

Հուրի Պոյամեան՝ Ս. Ստեփանոս Ազգային վարժարանի տնօրէն (Ուաթըրթաւն, Մասսաչուսեթս)

Յովսէփ Թորոսեան՝ ՀԲԸՄ Ալեք եւ Մարի Մանուկեան վարժարանի տնօրէն (Սալթֆիլտ, Միչիգըն)

Թալին Գարկոտորեան՝ Վահան եւ Անուշ Շամլեան Ազգային վարժարանի տնօրէն (Կլենտէյլ, Գալիֆորնիա)

Գանատա Լորի Ապրաքեան՝ Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի փոխտնօրէն (Մոնթրէալ, Քանատա)

Րաֆֆի Սարգիսեան՝ ՀՕՄ-ի Ամենօրեայ վարժարանի տնօրէն (Թորոնթօ, Քանատա)

Շահէ Թանաչեան՝ ՀԲԸՄ Ալեք Մանուկեան վարժարանի տնօրէն (Մոնթրէալ, Քանատա)

Արժանթին Կրասիէլա Այնաճեան՝ Խրիմեան վարժարան (Պուէնոս Այրէս, Արժանթին)

Էլենա Աշճեան՝ ՀԲԸՄ «Մարի Մանուկեան» Կրթական Հաստատութիւն

Ալիսիա Ներկիզեան՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Կրթական Հաստատութիւն (Պուէնոս Այրէս, Արժանթին)

ՄԱՅԱԶԴ



ՆԻՔ ՆՇԱՆԵԱՆ
(Ծննդի օրը՝ Մարտ 6, 1938ին, Հալէպ, Սուրիա)

Սրտի դառն կակիծով կը գոժենք մեր սիրեցեալ ամուսնոջն, հօր, եղբոր եւ հարազատին՝ Նիք Նշանեանի մահը, որ պատահեց փետրուար 7, 2018ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, Փետրուար 16, 2018ին, առաւօտեան ժամը 10.30ին, Սրբոց Ղեոնդեանց Մայր Տաճարում (3325 North Glenoaks Blvd., Burbank), որից յետոյ թաղումը կը կատարուի Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝ Այրին՝ Լէսլի Նշանեան եւ զաւակը Նիք Նշանեան կրտսեր Ջաւահիրը՝ Մայքլ Նշանեան եւ ընտանիք
- Արամ Նշանեան
- Ջանի Նշանեան եւ ընտանիք
- Քոյրերը՝ Վարդուհի Ներսէսեան եւ ընտանիք
- Վերքին Գոլդոյեան եւ ընտանիք
- Եղբայրները՝ Դանիէլ Նշանեան եւ ընտանիք
- Յովսէփ Նշանեան եւ ընտանիք
- եւ հեռու ու մօտիկ ազգականներ:
- Թաղման արարողութիւնից յետոյ հոգեճաշ կը մատուցուի «Օճախ» սրահում:
- Փոխան ծաղկեպսակի ձեր նուիրատուութիւնները խնդրուած է կատարել «Հայաստանի ծնողազուրկ հաշմանդամ երեխաների ֆոնտին Armenian American Orphans Disabled Childrens Fund (Est. 1999).

ՑԱԲԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱՐՄԵՆԱԿ ՊՈՅԱՄԵԱՆԻ մահուան տխուր առթիւ Տէր եւ Տիկ. Պետրոս եւ Լենա Խոտանեան իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն: Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

HARRY THE HANDYMAN SERVICES

**Air Conditioning Repair
Plumbing & Roofing
Water & Gas Pipes • Fencing & Painting
Iron Work Repair • Electrical Job**

Email: haroutig007@gmail.com

Dependable • Reliable • Fast Work

CALL HARRY

818-219-3314

**OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA**

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

**1060 North Allen Ave
Pasadena, CA 91104**

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով

Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ՄԱՐԶԱԿԱՆ

Ֆուտպոլի Աշխարհի Առաջնութեան Գաւաթը Առաջին Անգամ Բերուած է Հայաստան

Ֆուտպոլի Աշխարհի գաւաթը առաջին անգամ ըլլալով ժամանած է Հայաստան եւ ցուցադրուած Երեւանի մէջ:

Չորեքշաբթի օր գաւաթը հայաստանցիներուն ներկայացուցած է Ֆրանսայի հաւաքականի կազմին մէջ 1998 թուականի աշխարհի առաջնութեան արտօնան, «Ռէյալ»-ի նախկին ֆուտպոլիստ Քրիսթիան Քարամպիոն:

«Սա հնարաւորութիւն կու տայ բոլոր երեխաներուն երազանքը իրականութիւն դարձնել, եւ ես կ'ուզեմ քաջալերել աւագին՝ Հենրիխ Մխիթարեանին, որ իր ազգային խումբով խաղայ եւ վստահութիւն ձեռք բերէ, յաջորդ անգամ յաղթահարելու համար աշխարհի գաւաթի որակաւորման փուլը: Եւ այստեղ գալով յոյս ունինք, որ զարկ պիտի տանք Հայաստանի մէջ ֆուտպոլի տարածման, եւ իհարկէ, ՖԻՖԱ-ի մրցաշարին մէջ խաղալու հնարաւորութիւն կ'ըլլայ», - ըսած է ան:



Ֆուտպոլի աշխարհի առաջնութեան ոսկեայ գաւաթի շրջագայութիւնը աշխարհի տարբեր երկիրներով սկսած է 2006 թուականին: Առաջին անգամ գաւաթը այցելած է 29 երկիր՝ աւելի քան 175 հազար երկրպագուի հնարաւորութիւն տալով լուսանկարուիլ անոր հետ: 2010 թուականին գաւաթը եղած է 84 երկրի մէջ, իսկ 2014-ին՝ 90 երկրի՝ մէկ միլիոնէ աւելի երկրպագուի հնարաւորութիւն տալով լուսանկարուիլ:

Այս տարուայ ֆուտպոլի աշխարհի առաջնութեան գաւաթի շրջագայութեան սկիզբը մեկնարկած է Ռուսաստանէն: 2018 թուականի Մայիսին ոսկեգօծ գաւաթի շրջագայութիւնը կ'աւարտի, այցելելով 91 քաղաք:

Ոսկեգօծ գաւաթի նկատմամբ յատուկ հսկողութիւն սահմանուած էր: Ազատութեան հրապարակի մէջ հերթեր գոյացած էին. հայ ֆուտպոլասէյնները հաւաքուած էին գաւաթը տեսնելու եւ լուսանկարուելու համար:

«Տպաւորութիւնները շատ լաւ են, քանի որ Հայաստանի մէջ աննախադէպ բան տեղի կ'ունենայ, - «Ազատութեան» հետ զրոյցին ըսած է երկրպագուներէն մէկը:

«Կը ցանկանայի Մխիթարեանը մեր խումբով արժանանար այս գաւաթին, ես ալ կողքը կանգնած նկարուէի», - աւելցուցած է մէկ ուրիշը:

Ֆուտպոլի աշխարհի 21-րդ առաջնութիւնը 2018 թուականին պիտի կայանայ Ռուսաստանի 11 քաղաքներու 12 մարզադաշտերու մէջ: Մէկամսեայ առաջնութեան մեկնարկը պիտի տրուի 14 Յունիսին:

Հենրիխ Մխիթարեան. Ես Մեծ Յաջողութիւնների եմ Հասել «Մանչեսթեր Եունայթեդում»

Մարդիկ կարող են ասել, որ ես այնքան էլ յաջող չեմ եղել «Մանչեսթեր Եունայթեդում», բայց ես կարծում եմ, որ շատ յաջողութիւնների եմ հասել այստեղ, ասել է Լոնտոնի «Արսենալի» եւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը:



«Մէկ մրցաշրջանում մենք նուաճեցինք երեք տիտղոս, դարձայ Եւրոպայի լիգայի գաւաթակիր, կոլ խփեցի այդ մրցաշարի եզրափակիչում: Ես համարում եմ, որ հասել եմ յաջողութիւնների:

Արսեն վենգերն աւելի ընկերական է, հասկանում է ֆուտպոլիստներին, կարող է մտածել ֆուտպոլիստների վիճակի մասին, հանգիստ է: Այս է տարբերութիւնը Մոուրինիոյի հետ, որը աւելի խիստ է եւ շատ պահանջկոտ է», - ասել է Մխիթարեանը:

Յիշեցնենք, որ հայ ֆուտպոլիստին «Մանչեսթեր Եունայթեդը» փոխանակել է չիլիացի յարձակուող Ալեքսիս Սանչեսի հետ:

«Բարսելոնան» Առաջին Անգամ Կոլ Չխփեց Պրիմերայում

Սպանական Պրիմերայի 23-րդ տուրում առաջատար «Բարսելոնան» սեփական դաշտում սենսացիոն ոչ ոքի խաղաց «Խետաֆէի» հետ: Հանդիպման հաշիւն այդպէս էլ չբացուեց՝ 0:0:

«Բարսելոնան» ունէր հսկայական տարածքային առաւելութիւն, սակայն կոլային պահերը շատ քիչ էին «Խետաֆէի» դարպասի մօտ: Կատալոնական ակումբը 59 միաւորով առաջատարն է եւ 7 միաւոր է գերագանցում երկրորդ տեղում գտնուող Մատրիտի «Աթլետիկոյին»: Լաւագոյն եռեակը եզրափակող Մադրիդի «Ռեալն» ունի 42 միաւոր, եւ մէկ խաղ էլ պակաս է անցկացրել:

Սպանիայի ընթացիկ առաջնութիւնում «Բարսելոնան» առաջին անգամ չկարողացաւ գրաւել մրցակցի դարպասը:

«Լիւերպոլը» Մօտնում է «Մանչեսթեր Եունայթեդին»

Ֆուտպոլի Անգլիայի առաջնութեան 27-րդ տուրում «Լիւերպոլը» մրցակցի դաշտում 2:0 հաշուով յաղթեց «Մաուլթհեմփթոնին»:

Այս յաղթանակի շնորհիւ Յուրգեն Կլոպի գլխաւորած թիմը շրջանցեց Լոնտոնի «Տոտենհեմին» եւ 54 միաւորով բարձրացաւ երրորդ տեղ: Երկրորդ տեղում գտնուող «Մանչեսթեր Եունայթեդն» ունի 2 միաւոր աւելի:



Անգլիական Պրեմիեր լիգայի 27-րդ տուրում «Մանչեսթեր Եունայթեդը» հիւրընկալուելիս նուազագոյն հաշուով պարտուեց «Նիւքասլին»: Տանտերերի յաղթական կոլը 65-րդ րոպէին խփեց շոտլանդացի կիսապաշտպան Մեթ Ռիտչին:

«Մանչեսթեր Եունայթեդը» 56 միաւորով մնաց երկրորդ տեղում եւ արդէն 16 միաւոր է հետ առաջատար «Մանչեսթեր Սիթիից»: «Նիւքասլը» 28 միաւորով բարձրացաւ 13-րդ տեղ:

Քեյնի Գեղեցիկ Կոլը Յաղթանակ Բերեց «Տոտենհեմին» «Արսենալի» Նկատմամբ

Ֆուտպոլի Անգլիայի առաջնութեան 27-րդ տուրում փոխախօյան «Տոտենհեմը» հիւրընկալուեց «Արսենալին»: Երկրորդ խաղակէսի սկզբում անգլիացի յարձակուող Հարի Քեյնի խփած գեղեցիկ կոլի շնորհիւ յաղթանակ տարաւ արժենթինացի Մաուրիսիօ Պոչետինոյի գլխաւորած թիմը:

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Արսենալի» մեկնարկային կազմում էր եւ փոխարինուեց 65-րդ րոպէին: «Տոտենհեմը» 52 միաւորով բարձրացաւ երրորդ տեղ: 26 հանդիպում անցկացրած «Լիւերպոլն» ունի 51, «Չելսին»՝ 50 միաւոր: «Արսենալը» 45 միաւորով 6-րդն է:

«Ռեալը» Շանս Չտուեց «Ռեալ Սոսյեդադին», Ռոնալդուն՝ Եռեակի Հեղինակ



Սպանիայի առաջնութեան 23-րդ տուրում Մատրիտի «Ռեալն» ընդունեց «Ռեալ Սոսյեդադին»: Ֆրանսացի Զինեդին Զիդանի գլխաւորած թիմը վաստահ յաղթանակ տարաւ՝ չորս կոլ խփելով արդէն առաջին խաղակէսում: Առաջին րոպէին հաշիւը բացեց սպանացի Լուկաս Վասկեսը: Հեթ-տրիկի հեղինակ դարձաւ պորտուգալացի Կրիշտիանու Ռոնալդուն: Աչքի ընկաւ նաեւ գերմանացի Տոնի Կրոսը: Վերջնամասում հիւրերը կարողացան կրճատել հաշուի տարբերութիւնը՝ 5:2:

«Ռեալը» 22 խաղից յետոյ 42 միաւորով բարձրացաւ երրորդ տեղ եւ 2 միաւորի առաւելութիւն ունի չորրորդ տեղում ընթացող «Վալենսիայից»: Արքայական ակումբը 16 միաւոր հետ է առաջատար «Բարսելոնայից» (22 խաղ), 10 միաւոր՝ Մադրիդի «Աթլետիկոյից» (23 խաղ): «Ռեալ Սոսյեդադն» ունի 26 միաւոր եւ 14-րդն է:

ՊՍԺ-ի Ծանր Յաղթանակը

Ֆրանսայի առաջնութեան 25-րդ տուրում առաջատար ՊՍԺ-ն մրցակցի խաղադաշտում հանդիպեց «Թուլուզի» հետ եւ յաղթեց 1:0 հաշուով:

68-րդ րոպէին արժենթինացի Անխել Դի Մարիայի փոխանցումից յետոյ աչքի ընկաւ պրագիլացի Նէյմարը:

ՊՍԺ-ն մրցաշարային աղիւսակը գլխաւորում է 65 միաւորով եւ 13 միաւորի առաւելութիւն ունի երկրորդ տեղում ընթացող «Մարսելի» նկատմամբ: «Թուլուզը» 26 միաւորով 15-րդն է: